

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ (1857-1929)

*Քան զամէն թշուառ են՝ ըստ Հիկոի՝
Անոնք որ չունեն լոյս, հաճոյք աչքի.
Ըստ իս՝ դժբախտ են անոնք անելի
Որ լոյս են տեսած՝ ապա կորուսած...
Հ. Երամեան*

Հայ դպրոցի եւ մանկավարժութեան մէջ Համբարձում Երամեանը յայտնի է իր քառասուն տարուայ անընդմէջ դպրոցավարական եւ ուսուցչական արգասաբեր գործունէութեամբ: Ճակատագրի բերմամբ նա չկարողացաւ կրթութիւն ստանալ եւրոպական բարձրագոյն դպրոցներում, ի զօրու չեղաւ խորանալ օտար լեզուների իմացութեան մէջ, զգալապէս անհաղորդ մնաց եւրոպական քաղաքակիրթ միջավայրին, աշխարհաճանաչողութեան զարգացման համար հնարաւորութիւն չունեցաւ դուրս գալ հեռազնայ չընթացողութիւնների: Այնուհանդերձ, 60ական թուականների Վանի թաղային վարժարաններում ստացած իր համեստ կրթութեամբ եւ ընդամէնը մանկական ջինջ զգացողութիւնների տպաւորութեամբ եւ իր ծննդավայր Վան-Վասպուրականի խորախորհուրդ տեսլականով ներշնչուած լուսաւորիչը՝ ինչպէս ինտելեկտուալ հնարաւորութիւններով եւ աշխարհընկալման իր բնատուր տաղանդով, այնպէս էլ ստեղծագործելու անսպառ եռանդով եւ դպրոցավարական հարուստ փորձով, ամենեւին չի զիջում ո՛չ հայրենական, ո՛չ էլ արտասահմանեան դասական մանկավարժներին:

Մանկավարժական եւ հրապարակախօսական գրականութեան մէջ Հ. Երամեանի կեանքի եւ գործունէութեան մասին տեղեկութիւնները սուղ են. Գառնիկ Ստեփանեանի կենսագրական բառարանում եւ Հայկական սովետական հանրագիտարանում համառօտ ծանօթագրւում է, որ նա եղել է արեւմտահայ կրթական գործիչ, կցկտուր տեղեկութիւն է տրւում նաեւ նրա հիմնադրած դպրոցի մասին: Սակայն չկան առանձին ուսումնասիր-

րութիւններ նրա մանկավարժական գործունէութեան մասին եւ, ցաւօք առ այսօր, գիտամեթոդական հետազօտութեան չի ենթարկուել նրա հիմնադրած դպրոցի 37 տարուայ պատմութիւնը եւ ոչ սովորական պայմաններում նրա 40 տարուայ հասարակական եւ մանկավարժական գործունէութիւնը, որ նշանակալի հետք է թողել հայ դպրոցի եւ մշակոյթի պատմութեան հարուստ անդաստանում: Եւ եթէ դպրոցի միջոցով ազգային գոյաբանութեան եւ հայապահպանութեան այդ նախանձախնդիր հաւատաւորի գերագոյն ջանքերով չստեղծուէր Յուշարձան Վան-Վասպուրականի երկու ծաւալուն հատորներից կազմուած աշխատութիւնը, որ պատմական բացառիկ վաւերագիր եւ սկզբնաղբիւր է արեւմտահայութեան, մասնաւորապէս Վանի վիլայեթի ժ. դարի վերջերի եւ ի. դարի առաջին տասնամեակների տնտեսական, ազգային եւ քաղաքական վիճակի մասին, թերեւս մոռացութեան մատնուէր կրթութեան եւ դպրոցական գործի այդ մեծ երախտաւորի հարուստ եւ դրամատիկ կեանքի արտասովոր պատմութիւնը եւ մանկավարժական ու հասարակական գործունէութեան հերոսական էջերը:

Համբարձում Երամեանը ծնուել է 1857ի Մայիսին, Վանի յայտնի Երամեան գերդաստանում¹: Տեղի աւանդոյթի համաձայն, մինչեւ տաս տարեկան հասակը նա կրել է ոսկի գինդեր, իբրեւ ընտանիքի կիստեր, եղել է սիրուած ծնողների եւ հարազատների կողմից: Նրա մանկութիւնն անցել է Այգեստանի մրգաստան-ծառաստաններով ու վարդաստաններով հարուստ բնաշխարհում, որն անջնջելի հետք է թողել նրա մանկական յիշողութիւններում: «Մասնաւոր խանդով մը կը սիրէի ինչ որ հմայիչ էր բնութեան մէջ,- գրում է նա,- կը սիրէի ծառն ու ծաղիկ, լեռ ու ծմակ, դաշտ ու ծով: Ստեպ կը բարձրանայի մեր ընդարձակ մրգաստանը»:

1 Իր գերդաստանի մասին մա տալիս է հետեւեալ ծանօթագրութիւնը. «Ըստ հօրս պատմածի, իբր երկու դար առաջ, Շահնազար անուն պարսկահայ մը, կու գայ կը բնակի ժամանակ մը Վանայ արեւելակողմ, Արճակ գիւղը: Ապա կը փոխադրուի Այգեստանի այն թաղը, որ նոր սկսած էր շէննալ եւ զոր այս պատճառաւ թուրքերը իրաւամբ նորաշէն կ'անուանէին [ընդգծումը բնագրային է], իսկ հայերը Ս. Յակոբ՝ թաղին եկեղեցւոյն անունով: Այդ թաղն ահա իր եկեղեցիով ու կից գերեզմանատունով կը լինի մեր գերդաստանի օրօրանը, աւագանը եւ դամբարանը: Շահնազարի որդին էր թաղին աւագերէց՝ Տէր Յոհաննէսը, եւ սորա միակ ժառանգ Երեմիայի անունէն կը ծագի մեր Երեմեան կամ Երամեան տոհմանունը» (ԵՐԱՄԵԱՆ, Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Ա., Գաիիրէ 1929, 37):

տանի քարճարքերձ ծառերու կատարը կամ մեր երկյարկանի բաւական քարճր տան կտուրը՝ զմայլագին դիտելու համար ծագող արեւը կամ լուսինը...: Նոյնքան հմայուած կը դիտէի գիշերուան քագուհիին մագելանեմ խաղացքն, որուն արծաթափայլ շողերուն հետ կը խաղայի եւ կը խօսէի անկողնիս մէջ: Արեւածագէն երկու ժամ առաջ կը յառէի աչքերս արեւելեան հորիզոնին վրայ փայլփռող գեղամանաչ Արուսեակին, որ ձմրան եղանակի գիշերաւորն է՝ գննիքին վրայ՝ կարմրափայլ»²: *Բնութեան այդ գողտրիկ տեսարաններն այնպէս խորն էին տպաւորուել նրա մանկական ներաշխարհում, որ յետագայում, երբ զրկուել էր աչքի լոյսից վանի գարունը խորագրով ստեղծագործական շարադրութեան մէջ այնքան տպաւորիչ եւ իրական էր նկարագրել զարնան զմայլեցուցիչ տեսարանները, որ դրանք մեծ հիացմունք էին պատճառել իր ուսուցչին՝ Տիգրան Ամիրճանեանին:*

Ինը տարեկանում ծնողների հետ փոքրիկ Համբարձումը ուխտադնացութիւն է կատարել Նարեկայ վանքը, տեսել է Արտամէտը, Հայոց Զորը, Ոստանը, Ռչտունիքը, Արտոսը, իսկ Լիմ անապատ կատարած ուխտանգացութեան ընթացքում նա հմայուել է Տոսպ- Թիմարի ցամաքային ու ծովային հրաշագեղ տեսարաններով եւ Սիփանի վեհափառ կեցուածքով. «... Այսպէս ուրեմն, գրում է նա, մանկութեան ծաղկատի շրջանին քնութիւնն եղաւ իմ մախապիւրած գիրքն ու պատկերասրահը, որոնք իմ մէջ զարգացուցին ոգին հետաքրքրութեան եւ սէրը գեղեցիկին»³:

Համբարձումը 5-6 տարեկանում յաճախում է Ս. Յակոբի Ղուկասեան վարժարանը⁴, որտեղ նրա առաջին ուսուցիչը հայրն էր՝ Յարութիւն Երամեանը⁵: Յետագայում նա սովորում է Տէր

2 ԵՐԱՄԵԱՆ, Հ., *Յուշարձան վան-Վասպուրականի, Ա.*, Ադեֆսանդրիա 1929, 47:

3 Անդ, 49-50:

4 Կ. Պոլսի պատրիարք Մատթէոս Զուհանեանի հրահանգով 1847-1848 թուականներին արեւմտահայ գաւառներում բացւում են դպրոցներ: Պոլսաքնակ երեւելի վանեցիները վանում մոյնպէս բացել են հինգ ծխական վարժարան՝ մէկը Քաղաքամիջում, չորսը Այգեստանի եկեղեցիներին կից: Յարութիւն Երամեանը 150 ոսկի է մուիրաքերում վարժարանների հիմնադրման գործին: Իրիւ երախտագիտութեան մշան, վարժարանները կոչուել են մրա չորս եղբայրների անունով: Դրանցից մէկը Ս. Յակոբի եկեղեցուն կից Ղուկասեան վարժարանն էր:

5 Հ. Երամեանի պապը (Երեմիան) եւ մախապապը (Տէր Յովհաննէսը) մշաւաւոր էին իրենց թողած կրօնական եւ պատմագրական հարուստ գրա-

Մեսրոպ քահանայ Փափագեանի⁶ մօտ: 1864ին եղբայրների հետ նա յաճախել է Այգեստանի Յայնկոյսների թաղային վարժարանը, որն աւարտել է 1868ին:

ԺԹ. դարի 60ականներին արեւմտահայ դպրոցները դեռեւս չունէին կրթական կանոնաւոր ծրագրեր, չէր գործում դասարանային-դաս համակարգը, չկար նաեւ պարապմունքների կանոնաւոր ժամանակացոյց: Այսուհանդերձ, աշակերտները շատ լաւ տիրապետում էին ուսուցիչների կողմից պարտադրուած երկաթեայ օրէնքին՝ ըստ որի իւրաքանչիւրը յստակ գիտէր իր դասի պահը: Աշակերտները շարքով կանգնում կամ էլ տախտակամածի վրայ ծնկաչոք կազմում էին կիսաբոլոր շրջանակ ուսուցչի առջեւ, իսկ ուսուցիչը թախտի կամ բարձի վրայ բազմած լսում էր նրանց համարատուութիւնը, որից յետոյ աւանդում կամ դասագրքի վրայ նշում էր ընթերցանութեան յաջորդ դասը: Երեխաները օրական պարապում էին մէկ կամ երկու դաս՝ մէկ քառուղից մինչեւ երեք քառուղի տեւողութեամբ: Դասամիջոց հասկացութիւն նոյնպէս չկար, շատ յաճախ ուսուցիչների առաջնորդութեամբ երեխաներն ուղեւորւում էին վանի մերձակայ յիշարժան վայրերը՝ դասերն այնտեղ շարունակելու նպատակով: Այդպիսի միջոցառումների ժամանակ նրանք երգելով գնում եւ երգելով վերադառնում էին դպրոց: Երգերը կրօնաշունչ բանաստեղծութիւններ ու աղօթքներ էին: Յետագայում Տիգրան Ամիրճանեանն՝ իբրեւ նորարար ուսուցիչ, դպրոց բերեց ազգային եր-

կանութեամբ: Դրանց մէջ յատկապէս արժեքաւոր էին Ամստերդամում տպագրուած Աստուածաշունչը, մանկ քաղմաթիւ ձեռագրեր, մագաղաթներ եւ ցկարագարդ Յայսմաւուրքը: Յարութիւն Երամեանն իր երաժշտական կրթութիւնը մասնաւորապէս ստացել է հօր, ապա՝ ժամանակի նշանաւոր երաժիշտ Տէր Պետրոս Բախանայի մօտ: Մինչեւ ԺԹ. դարի 60ական թուականները Յարութիւն Երամեանը եղել է վանի բոլոր Բախանայների ու դպիրների ղեկավարն ու ուսուցիչը: Վանի հիմնադրող երեւելիներն ու մեծամեծները միայն մօտ էին ուսում առնել: Մինչեւ ծերութիւնը մասնաւոր յարգամբ ու հեղինակութիւն է ունեցել վանի պաշտօնական եւ ոչ պաշտօնական շրջանակներում:

6 Մեսրոպ Բախանայ Փափագեանը՝ Ներսէս (Մաշտոց), Վրթամէս եւ Վահան Փափագեանների հայրն էր: Իբրեւ նախադաս ուսուցիչ մասնաւորապէս ղեկավարել է Ագուլիս եւ տարիներ շարունակ եղանդուն մանկավարժական գործունեութիւն է ծաւալել Ագուլիսում եւ Թաւրիզում:

7 Տիգրան Ամիրճանեանը մասնաւորապէս աշակերտել է Յարութիւն Երամեանին, այնուհետեւ՝ Տէր Մեսրոպ Փափագեանին, որից յետոյ ուսումը շարունակել

գեր: Նա Վանի դպրոցներ ներմուծեց նաեւ ազգային եւ ընդհանուր պատմութիւն, կրօնագիտութիւն, աշխարհագրութիւն (քարտիսագրութիւն), թուաբանութիւն, գրաբարի հետ նաեւ աշխարհաբար քերականութիւն, ֆրանսերէն եւ օսմաներէն լեզուներ, ստեղծեց նաեւ աշխարհաբար լեզուով դասագրքեր:

Յայնկոյսների վարժարանի աւագ ուսուցիչը 30 տարի շարունակ Աւետիս Սահառունին էր: Նա գրաբար սովորել էր Ս. Փրկիչ հիւանդանոցում: Ունէր գեղեցիկ ձեռագիր եւ գրաբարեան քաջահմուտ դասերով ոգեշնչման աղբիւր էր իր սաների համար: Քիչ թէ շատ նա տիրապետում էր նաեւ ֆրանսերէն եւ օսմաներէն լեզուներին, ունէր ֆրանսերէն հարուստ գրականութիւն, նաեւ մեծ թուով գրքեր բուսաբանութիւնից եւ կենդանաբանութիւնից: Թէեւ ի վերուստ շնորհուած էր ինտելեկտուալ կարողութիւններով, սակայն ծոյլ էր եւ մինչեւ վերջ չհրաժարուեց դաստիարակութեան տէրթողիկեան (խալֆայական) մեթոդներից: Այսուհանդերձ, Երամեանը 1864-1868 թուականներին Սահառունու մօտ յաջողութեամբ սովորեց գիր ու գրականութիւն, ստացաւ նաեւ գրաբարի քերականութեան նախագիտելիքներ:

Վանի մեծատուններից մէկի՝ Վարդան Կոսպարեանի խորհուրդով, 1868ի Մարտին տաս տարեկան Համբարձումին հայրը Յայնկոյսների դպրոցից տեղափոխեց Տ. Ամիրճանեանի Ս. Յակոբի դպրոցը: Երբ առաջին օրը Համբարձումը յաճախեց դպրոց, Տ. Ամիրճանեանը թեթեւ քննութիւն անցկացրեց եւ Նարեկի ընթերցումով գոհ մնալով, աւարտեց գրաբար ընթերցումի դասը: Սակայն, Համբարձումը որքան հայերէնի եւ ընդհանրապէս հումանիտար առարկաների մէջ բացառիկ հետաքրքրութիւն էր ցուցաբերում, այնքան էլ մաթեմատիկական առարկաների եւ օսմաներէնի իմացութեան մէջ առաջադիմութիւն չունէր:

Է Մկրտիչ Խրիմեանի հիմնադրած Վարագայ ժառանգաւորացում: 1860իմ մա մեկնել է Կ. Պոլիս եւ որպէս ընտանեկան ցամաքուած ուսուցիչ գրաւել է Մարկոս Աղաբեկեանի ուշադրութիւնը, նրա հրաւերով աշխատել է Գատը գիւղի Արամեան վարժարանում: Նա քաջահմուտ էր հայերէն հիմնու մօր լեզուներին, թուրքերէնին, ֆրանսերէնին եւ մի շարք գիտութիւնների մէջ, որոնք իմքնակրթութեամբ ձեռք էր բերել Կ. Պոլսում ապրած տարիներին: 1867ի աշնանը Կ. Պոլսից մա վերադարձաւ Վան եւ նշանակուեց Ս. Յակոբի աւագ ուսուցիչ եւ իր առաջադիմական գաղափարներով եւ նորամուծութիւններով նշանակալի տեղ գրաւեց Վանի մտաւորականութեան շրջանում:

Փոքրիկ Համբարձումի բնաւորութեան գծերից մէկը յամառութիւնն էր, որ տարիներ ընթացքում փոխուեց հաստատակամութեան, ինչը նրան կեանքի բազմաթիւ դժուարութիւններ յաղթահարելու միջոցով օգնեց ոտքի կանգնել եւ գտնել իր տեղը կեանքում: Մանկութեան տարիներին նա ազատ ժամերին զբաղուել է նաեւ տնային գործերով, օգնել է սիրասուն մայրիկին⁸, մշակել է պարտէզի ծաղիկները, հաւաքել է պտուղները, մաքրել է ախոռը եւ կատարել բազմաթիւ այլ աշխատանքներ, որքան ներել են նրա մանկական ուժերը: Տասնմէկ տարեկան էր նա, երբ հիւանդացաւ ծաղիկով եւ զրկուեց աչքի լոյսից՝ «... խեղճ մայրս,- գրում է նա,- խստիւ կը յանդիմանուէր ինքեան, զի մայրական գգով արգելած էր պատուաստը...»: Հայրը յոյսը կտրած փորձում է որդուն պատրաստել իբրեւ աշուղ, այդ նպատակով գնում է քնար, գտնում է Սիւզան անունով մի գուսան՝ նրան աշուղական արուեստին վարժեցնելու համար: Սակայն նրա կոչումը դա չէր, քանի որ կեանքից առաւել սիրում էր գիրը եւ ուսումը. «Քեպէտ տատասկը խաւարեցուցած էր ականդղիկս,- գրում է նա,- սակայն հոգույս մէջ կայծ մը կար անշէջ»: Այդ կայծը չէր վրիպել նաեւ նրա ուսուցչի աչքից, հետեւաբար՝ նա համոզում է հօրը, որպէսզի որդուն դպրոց ուղարկի: Հիւանդութիւնից մէկ տարի անց Տ. Ամիրճանեանն անձամբ Համբարձումին ուղեկցում⁹ է դպրոց: Դպրոցն այսուհետ պէտք է դառնար նրա միակ սփոփանքն ու պատսպարանը, իսկ սիրելի ուսուցչի ներկայութիւնը՝ նրա ներշնչանքի եւ ոգեշնչման հիմնական աղբիւրը: Յետագայում նա գրում է. «Ընկերներս՝ Ամիրճանեանի յանձնարարութեամբ՝ ինձ լսելի ձայնով պիտի պատմէին իրենց հայերէնի, պատմութեան, կրօնի, աշխարհագրութեան դասերը, եւ ես ի բերան կը սովորէի աւելի շուտ եւ իրենցմէ աւելի աղէկ՝ երբեմն նախանձ շարժելու աստիճան»⁹: Եւ այսպէս ընթերցումներով եւ դասերն ունկնդրելով Համբարձումը ֆորանսերէնից եւ բնագիտական առարկաներից ձեռք բերեց գիտելիքների հարուստ պաշար: Պատանեկան տարիքում նա արդէն հասցրել էր ծանօթանալ տարբեր մատենագիրների աշխատութիւններին: Կարդացել էր Հոմերոսի իլիականն ու Օդիսականը, Տեւեմաքը, Մխի-

8 Մայրը՝ Կատարինէն, վաղի նշանաւոր փեհրիզեան գերդաստանից էր, ուսեալ, գրասիրտ եւ քարեգութ մի կիճ, որն իր ընտանեկան հարուստ շտեմարաններով, լիքն ամբարներով պահել եւ սովից փրկել էր բազում աղքատ ու սովեալ ընտանիքներ:

9 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ., 73-74:

Թարեանների շատ աշխատութիւններ: Իսկ Աստուածաշունչը, Նարեկը, Սաղմոսը եւ եկեղեցական երգեցողութիւնները նա գիտէր բերանացի, քանի որ անընդմէջ ներկայ էր եկեղեցական բոլոր արարողութիւններին: Գրեթէ բերանացի արտասանում էր Հ. Եփրեմ Զազըճեանի Հայոց պատմութիւնն ամբողջութեամբ, նաեւ այդ շրջանի աշխարհագրութեան եւ բնագիտութեան դասագրքերը:

Մեծ է եղել Տ. Ամիրճանեանի դերը Համբարձումի ինչպէս հոգեւոր կեանքում, այնպէս էլ մասնագիտական կողմնորոշման հարցում: Տակաւին պատանի էր, երբ հաւատաց եւ խանդավառուեց նրա՝ «Համբարձում քեզ վարժապետ պիտի ընեմ» գաղափարով: Սակայն այդ բառերը օդում արձակուած սին բառեր չէին: Ընդամէնը 15 տարեկան էր, երբ նա իր արժանաւոր սանին վստահեց գրաբարի քերականութեան եւ Աւետարանի աշխարհաբար թարգմանութեան դասերը: Այդ շրջանում աշխարհաբարի քերականութեան դասագրքեր չկային. գործածութեան մէջ էին Արսէն Այտնեանի Տարերքը եւ Սարգիս Գնունու Քերականութիւնը, որոնք համարուում էին դպրոցներում կիրառելի լաւագոյն դասագրքերը: Ամիրճանեանը համոզուած էր, որ կոյր պատանին կը յաղթահարի ուսուցչի մասնագիտութեան առաջին լուրջ փորձութիւնները, ուստի լրջօրէն հետեւում էր նրա դասերին եւ նրբանկատօրէն ուղղում նրա մեթոդական սխալները՝ առաջնորդելով նրան իր կողմից ուղղորդուած մասնագիտութեան բարդ ու դժուարին ոլորանները:

1873ին Ամիրճանեանը փոխադրուեց Քաղաքամիջի Յիսուսեան վարժարան: Մեծանուն ուսուցչի ներկայութիւնը վարժարան բերեց բազմաթիւ ուսումնատենչ պատանիների՝ յատկապէս Ֆրանսերէն սովորելու համար: Համբարձումը նոյնպէս ամէն օր, մէկ ժամուայ ճանապարհ կտրելով, Ս. Յակոբի մի խումբ պատանիների հետ յաճախում էր Յիսուսեան վարժարան: Այստեղ Ամիրճանեանը յաճախ նրան էր վստահում աւագ կարգի աշակերտների դասերը: Հէնց այս վարժարանում էր, որ Վանի առաջնորդ Գրիգորիս Վ. Աղուանեանը մօտիկից ճանաչեց Համբարձումին եւ միջնորդեց, որպէսզի նոյն դպրոցում՝ 1874ին նա նշանակուէր իբրեւ օգնական ուսուցիչ: Տեղին է մատնանշել, որ յետագայում մասնաւոր դպրոց բացելու գաղափարը նոյնպէս նրան ներշնչել է Աղուանեանը՝ յորդորելով նրան. «Դուն կրնաս օր մը անհատական կամ մասնաւոր վարժարան մը բանալ եւ աւելի լաւ մեթոտով վարել գայն»:

1875-1876 թուականներին Սահակ Գալաճեանը, Նշան Շիրվանեանը եւ Մելքոն Պարթեւեանը Քաղաքամիջի Ս. Պողոս եկեղեցուն կից հիմնեցին Ուսումնատարած մասնաւոր դպրոցը: Սա Վանի առաջին մասնաւոր դպրոցն էր, որ շուտով մեծ հռչակ ձեռք բերեց: Տ. Ամիրճանեանն այս դպրոցում իբրեւ այցելու ուսուցիչ դասաւանդում էր Փրանսերէն: Նա համոզեց Ս. Յակոբի եւ Յիսուսեան դպրոցների կրթական մարմիններին, որպէսզի աւագ կարգի աշակերտները մասնաւոր տարեվճարով փոխադրուեն Ուսումնատարած բարձրակարգ կրթութիւն ստանալու համար: Տ. Ամիրճանեանն իր հետ վերցնելով Համբարձումին, 60 աշակերտով տեղափոխուեց սոյն մասնաւոր վարժարանը. այն ունէր աւելի բարեկեցիկ ու յարմարաւէտ պայմաններ:

Հ. Երամեանի ջանքերով 1876ին հիմնադրուեց Բաքեսիքաց ընկերութիւնը, որի նպատակը պատանիների դաստիարակութեան համար բարենպաստ պայմանների ստեղծումը եւ նրանց «զանազան մոլորութիւններից» զերծ պահելն էր: Այդ խնդիրն իրականացնելու նպատակայարմար եղանակը գրադարան, կիրակնօրեայ լսարան, ընթերցարան, թատրոն հիմնադրելու համար անհրաժեշտ միջոցների հայթայթումն էր: Ընկերութեան կազմում ընդգրկուեցին Ուսումնատարածի աշակերտները, իսկ կիրակնօրեայ լսարան հիմնականում յաճախում էին չափահասները, որտեղ դպրոցի ուսուցիչների նախաձեռնութեամբ կազմակերպւում էին կրօնական եւ պատմաբանասիրական բնոյթի դասախօսութիւններ: Բաքեսիքացի կիրակնօրեայ լսարաններն ու թատերական ներկայացումները Քաղաքամիջի եւ Ս. Յակոբի դպրոցներում շարունակուեցին աւելի քան երեք տարի: Ամփոփելով Բաքեսիքացի գործունէութեան արդիւնքները Հ. Երամեանն իրաւացիօրէն նկատում է, որ պատանիների մէջ մեծացաւ ձգտումն ուսման եւ կրթութեան հանդէպ՝ նրանց զերծ պահելով այդ տարիքին բնորոշ մի շարք փորձութիւններից ու բարոյական շեղումներից:

Բաքեսիքացի հիմնադրմամբ սկսուեց Երամեանի հասարակական գործունէութեան շրջանը: Նրա նախաձեռնութեամբ 80ականներին հիմնուեց Բաքեսիքացի ընկերութիւնը, որի կազմում ընդգրկուեցին Բաքեսիքացի չափահաս անդամները: Ընկերութիւնը գործում էր շահակցական նկատառումներով, հետեւապէս բացեց առեւտրական խանութ, որն աշխատեցնում էր Նշան Գարասեֆեւեանը: Որոշ ժամանակ գործելուց յետոյ փակուեց նաեւ այս ընկերութիւնը: Հ. Երամեանն ստանալով Քաջարծորուեան ընկերու-

թեան եւ Ս. Յակոբի երիտասարդների վստահութիւնն ու աջակցութիւնը՝ 1878ի Յուլիսին հիմնեց Խնամատարը, որի նպատակը մի կողմից ունեցողիկ ընտանիքների համար սնունդ, դեղամիջոց, հագուստ եւ աշխատանք հայթայթելն էր, իսկ միւս կողմից՝ որք եւ անօթեւան երեխաներին կրթութիւն տալով՝ «վարժապետացու եւ քահանայ պատրաստելն էր»։ Ընկերութեան շուրջ համախմբուեցին վանի առաջաւոր երիտասարդները՝ Պետրոս Թուրշեան, Փանոս Վարպետեան, Մարտիրոս Կիւլիւմեան, Յովհաննէս Շահապոյլեան, Փանոս Կոսպարեան, Յակոբ Աղապապեան եւ ուրիշներ։ Նրա կազմում ընդգրկուեցին նաեւ նշանաւոր անհատներ՝ Յարութիւն Թերզիպաշեանը, Կոստանդին Կամսարականը, Երեմիա Եպիսկոպոս Տէր Սարգսեանցը, Գարեգին Սրուանձտեանցը, Կարնոյ առաջնորդ Մաղաքիա Օրմանեանը եւ ուրիշներ։ Հ. Երամեանը Ընկերութեան գործադիր ժողովի ատենապետ ընտրուեց։ Խնամատարին նիւթապէս ու բարոյապէս աջակցում էր վանի ռուսական հիւպատոս Կոստանդին Կամսարականը։

Ս. Խրիմեանի եւ Գ. Սրուանձտեանցի նախաձեռնութեամբ Խնամատարը իր 15 սաներով 1880ի ամռանը փոխադրուեց Վանից մէկ ու կէս ժամուայ հեռաւորութեան վրայ գտնուող Կարմրաւորի Ս. Աստուածածին վանքը, որն ունէր մշակելի հողեր եւ արօտավայրեր։ Խնամատարին յանձնուեցին նաեւ Ս. Խաչի եւ Վարագի լեռնամիջի Ս. Գրիգորի վանքերը, որոնք նշանաւոր էին իրենց սաղարթախիտ անտառներով, սառնորակ աղբիւրներով եւ մաքուր անապակ օդով։ Այս երեք վանքերի հողերը, գոյքն ու անտառները, յատուկ ցուցակներով յանձնուեցին Խնամատարին այն պայմանով, որ նա տարեկան 30 հնչուն ոսկի յատկացնէր առաջնորդարանին։ Ս. Խրիմեանը խոստացաւ 15 սաների նիւթական ծախսերը վերցնել իր վրայ, եթէ Խնամատարը յանձն առնէր սաներին փոխադրել Կարմրաւոր եւ այնտեղ բացէր գիշերօթիկ ապաստարան-որբանոց։ Որբանոց-գիշերօթիկի բացումը կատարուեց մեծ հանդիսութեամբ։ Յանձնաժողովը տասնոր որբերով սաների թիւը հասցրեց 25ի։ Խնամատարը ընդամէնը ունէր 150 ոսկու դրամագլուխ. այն հիմնականում ծախսուեց գիշերօթիկի կազմակերպման, սենեակների կահաւորման եւ այլ գործերի վրայ։ Հ. Երամեանն անթաքոյց հպարտութեամբ արձանագրում է. «Այս կը լինէր առաջին գիշերօթիկ որբանոցն ի Հայաստան՝ աշխարհական տարրերու հոգաբարձութեան ներքեւ, մինչ քա-

նի մը վամբեր կը պահէին համեստ ժառանգաւորացներ, որոնց մէջ ամենէն նշանաւորներն էին Վարագիմը եւ Մշոյ Ս. Կարապետինը»¹⁰։

Հ. Երամեանը Գործադիր ժողովի ատենապետութեան հետ մէկտեղ ստանձնեց նաեւ որբանոցի տեսչութիւնը։ Որբանոցն ունէր օգնական ուսուցիչ, իսկ Տ. Ամիրճանեանը շաբաթը երկու անգամ գալիս էր վանք՝ օսմաներէն եւ ֆրանսերէն դասաւանդելու համար։

Անդրադառնալով վանական ուսուցման հարցերին Երամեանը գրում է. «Այնուամենայնիւ ուսումնական մասը թերի կը մնար եւ ես սկզբունքով քաղաքի կրթութիւնը կը նախընտրէի վամակամէն, ուստի սեւեռած գաղափարս էր որբանոցը վերջնականապէս փոխադրել Այգեհատմ...»։ Նրա յամառ ջանքերով 1882ի Հոկտեմբերին որբանոցը տեղափոխուեց Այգեհատան եւ շարունակեց իր գործունէութիւնը վարձակալական հիմունքներով։

Ուշագրաւ է, որ Երամեանը 1881-1882 թուականներին բանակցութիւններ է վարել Սովելոց Կեդրոնական յանձնաժողովի հետ՝ որբանոցում արհեստանոց բացելու համար, որպէսզի երեխաները կրթութեան հետ սովորէին նաեւ կահագործութիւն, կոշկակարութիւն եւ դերձակութիւն։ Մինչ այդ որոշակի քայլեր էին արուել այդ ուղղութեամբ. համապատասխան գործիքներ էին բերուել Տրապիզոնից, սակայն Խնամատարի լուծարումով այդ գաղափարը նոյնպէս մարեց։

Հ. Երամեանի մասնաւոր դպրոց բացելու գործում, մեծ է եղել նաեւ Մ. Խրիմեանի դերը։ Իր քարոզներով նա կրթասէր վանեցիներին յորդորեց հաւաքական կամ անհատական միջոցներ տրամադրել այդ լուսաւոր գաղափարի իրականացման համար։

Եւ դա տուեց իր արդիւնքը։

Սաֆար Փեհրիզեանը եկեղեցական եւ ազգային երաժշտութեան ճրի դասերով գիշերօթիկում ստեղծեց կանոնաւոր երգչախումբ։ Պօղոս Նաթանեանը, Մանուէլ Միրախորեանը եւ Վանի վարժապետանոցի մարմնամարզութեան ուսուցիչ Կարապետ Փիլիպոսեանը առաջին երկու տարիները գիշերօթիկում աշխատեցին առանց վարձատրութեան։ Տ. Ամիրճանեանը շարունակում էր ամսավարձով դասաւանդել ֆրանսերէն ու թուրքերէն, իսկ աւելի ուշ ստանձնեց նաեւ մանկավարժութեան եւ մի քանի այլ առարկաների դասաւանդումը։ Նշան Գարասեֆերեանն իբրեւ

10 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ, 134։

այցելու ուսուցիչ, դասաւանդում էր գրահաշիւ եւ երկրաչափութիւն: Հ. Երամեանը դասաւանդում էր ընդհանուր եւ Հայոց պատմութիւն:

Սկզբնական շրջանում վարձի չափը տարեկան 7 արծաթ մեծիտ էր, այնուհետեւ այն բարձրացաւ՝ դառնալով 8 հնչուն ոսկի: Սկսած 1908ից մինչեւ 1915 թուականը, վարժարանն ունէր տարեկան 500-700 ոսկու հասոյթ. այն հիմնականում գոյանում էր սովորողների վճարումներից:

Երամեան վարժարանը 1884-1885 դպրոցական շրջանում արդէն ունէր զգալի յաջողութիւններ, իսկ 1886 թուականից սկսած մինչեւ ցեղասպանութիւնը՝ այն հռչակուել էր որպէս Վանի կեդրոնական բարձրագոյն ուսումնական հաստատութիւն: 1888ից վարժարանը գիշերօթիկից վերածուեց ցերեկօրեայի:

Դպրոցը պահելու եւ նրա գործունէութեան արդիւնաւետութիւնը բարձրացնելու համար Երամեանը մշտապէս ունեցել է ինչպէս նիւթական այնպէս էլ բարոյական դժուարութիւններ: Այսպէս, նա չի ընդունել Վանի զոյգ ծխական դպրոցներից առաջարկուած տեսուչի պաշտօնը, չի ընդունել նաեւ Վառնայից բարձր աշխատավարձով առաջարկուած ուսուցչի պաշտօնը, մերժել է նաեւ Թաւրիզից իրեն առաջարկուած քարոզչի պաշտօնը, եւ այլն: Անդրադառնալով դրան նա անկեղծօրէն խոստովանում է. «... Դպրոցի մէջ կը փնտռէի նոյնպէս միւսական շահս, ստեպ եմքարկուելով հանդերձ իմեմագրկումի եւ միմչեւ իսկ վարժարանի գոյութիւնն ապահովելու ըղձիւ՝ 1888-ին պիտի ստիպուէի վաճառել հօրեմական միակ ժառանգութիւններս, տուն եւ պարտեզ եւ այնուհետեւ տակաւին յամախ դիմել տոկոսաւոր փոխառութեանց՝ գրաւ տալով երբեմն արժեքաւոր կարասիներ կամ ընտանեկան զարդեղեմներ», քանզի նրա իղէալը իր հիմնադրած վարժարանն էր, որ տեղ էլ նա գտաւ իր երանելիութիւնն ու վայելքը, իր պատիւն ու փառքը: Նրա խոր համոզմամբ «իմքգիմք կրթելը եւ դէպի կատարելութիւն դիմելը առաջին պարտականութիւն մըն է ամէն մարդու եւ մանաւանդ ուսուցչի կամ դաստիարակի համար»¹¹:

Սա էր Հ. Երամեանի հաւատոյ հանգանակը:

Այս սկզբունքով առաջնորդուելով՝ իր շրջանաւարտներից իբրեւ ուսուցիչ ընտրում էր նրանց, որոնց մէջ նշմարում էր դաստիարակի կոչումն ու առաքինութիւնները: Նրա ընտրեալնե-

11 ԵՐԱՄԵԱՆ, Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Խո. Ա., 153-154:

րից ոմանք իրենց յամառ ինքնաշխատութեամբ, ինքնակատարե-
լագործմամբ գրեթէ չէին զիջում երկրորդական եւ համալսա-
րանական կրթութիւն ունեցող ուսուցիչներին: Հետեւապէս՝
վարժարանի ուսուցչական կորիզը երամեանական ոգով սնուած
ու ներշնչուած ուսուցիչներն էին:

1884-1885 ուսումնական տարում դպրոցի բարձր դասա-
րաններում Տիգրան Փիրումեանի ղեկավարութեամբ ձեռնար-
կուեցին փորձնական դասեր. բարձր դասարանի առաջադէմ աշա-
կերտները շաբաթական մի քանի ժամ դասաւանդում էին
դպրոցի կրտսեր խմբերում: Մանկավարժական նիստերում լուրջ
քննարկման ենթարկուեցին փորձնական դասերի արդիւնքները,
մատնանշուեցին դրանց դրական եւ բացասական կողմերը, կազ-
մուեցին դիտողութիւնների եւ առաջարկութիւնների համապա-
տասխան արձանագրութիւններ:

Միջառարկայական եւ ներառարկայական կապերի ամրա-
պնդման նպատակով, սահմանուեց նոր մեթոդիկա, ըստ որի
աւանդական դասալսումների փոխարէն իւրաքանչիւր ուսուցիչ
շաբաթը մէկ օր դասը պէտք է վարէր տարբեր առարկաներ դա-
սաւանդող ուսուցչների ներկայութեամբ: Մանկավարժական խոր-
հուրդներում եւ յատուկ նիստերում լայնօրէն մեկնաբանուեցին
դասերի նիւթերը, դասաւանդման մեթոդներն ու եղանակները,
նշուեցին դրանց նախապատրաստման եւ կազմակերպման ձեւերն
ու առանձնայատկութիւնները: Նմանօրինակ դասերի միջոցով ու-
սուցիչները ոչ միայն բացայայտում էին միջառարկայական եւ
ներառարկայական կապերի առկայութիւնը, այլեւ ծանօթանում
էին միմեանց մասնագիտական եւ առարկայական իմացական կա-
րողութիւններին եւ հմտութիւններին, բացորոշուում էին սովոր-
ողների ընդունակութիւնների առանձնայատկութիւնները, հե-
տաքրքրութիւններն ու նախասիրութիւնները տարբեր առարկա-
ների ուղղութեամբ:

Ելնելով իր մանկավարժական հարուստ փորձից, Երամեանը
դպրոցից մէկընդմիշտ վերացրեց բառարանից ընտրուած բառե-
րի բերանացի սերտման արատաւոր մեթոդիկան: Դրա փոխարէն
սովորողների մէջ զարգացրեց ընթերցասիրութեան, ինքնուրոյ-
նութեան եւ սեփական հետաքրքրութիւններով առաջնորդուելու
կարողութիւններն ու հմտութիւններ:

1884-1885 ուսումնական տարում Երամեանը մտցրեց եւս
մի նորամուծութիւն. վերացրեց դասի ամբօրեայ նիշերի դրու-

թիւնը, որն ուսուցչի համար տաղտկալի աշխատանք լինելուց բացի, աշակերտների մէջ առաջացնում էր նաեւ անցանկալի դժգոհութիւններ: Այդ հարցում նրա տեսակէտը հետեւեալն էր. «Դասի վրայ միայն կարն գնահատական մը կամ դիտողութիւն մը աւելի օգտակար գտայ, ինչ որ պաշտօնի կոչուող բոլոր ուսուցիչները կը գնահատէին: Այս կամ այն նոր ուսուցիչ մը մանաւանդ կըրնար սակայն իր մասնաւոր յուշատետրին մէջ նշանակել մէն մի աշակերտի ցոյց տուած աչքառու թերութիւնը, առաւելութիւնը կամ փոփոխականութիւնը. վերջին պարագան տեսչութեան կամ ուսուցչական ժողովի նկատառութեան կ'ենթարկուէր»¹²:

Վարժարանում ի սկզբանէ տարեկան քննութիւններից առաջ, պարտադիր էին եռամսեայ քննութիւնները, աւելի ուշ ընդունուեցին նաեւ հնգամսեայ եւ տարեվերջի քննութիւնները: Հնգամսեայ քննութիւնները անցկացնում էր ուսուցիչը՝ առանց ընթերակայի, սակայն նրա դրած նիշերը պարտադիր անցնում էին ուսուցչական ժողովի բոլուն քննարկումների բովով: Քննութիւնները սկսւում էին Մայիսի վերջին կամ Յունիսի սկզբին: Հնգամսեայ եւ տարեկան քննութիւններին ընդունուած էր տոմսի վիճակահանութեամբ ընտրելու ձեւը: Ուսուցիչը, առանց տետրակի կամ դասագրքի, միայն տոմսին նայելով տալիս էր հարցեր՝ պահանջելով «նաօրէն ներկայացնել նիւթը առանց յաշոյ հարցերի»: Քննող ուսուցչի հետ նստում էր նաեւ ընթերակայ, որն ունէր առանձին տետր՝ նիշեր դնելու համար: Քննութիւններից յետոյ մանկավարժական ժողովն այդ կրկնակի, նաեւ իւրաքանչիւր աշակերտի տարեկան նիշերից հանում էր միջին՝ հանրագումարային միաւորը: Բարձրագոյն նիշը հինգն էր, դասարանից դասարան փոխադրուելու համար աշակերտը առնուազը պէտք է հաւաքէր 3 1/2 նիշ:

Իւրաքանչիւր հինգ տարին մէկ, կրթութեան բարեփոխումներին համապատասխան, նորացւում էին նաեւ ուսումնական ծրագրերը:

1913-1914 ուսումնական տարում Երամեան վարժարանի 35 չրջանաւարտ սովորում էր պետական վարժարաններում: Նրանցից չատերն ընդունուել էին նաեւ Փարիզի եւ Պետերբուրգի համալսարաններ: Երամեան վարժարանն այնքան բարձր հեղինակութիւն ունէր, որ Վանի ինչպէս ազգային, այնպէս էլ միսիոներական վարժարաններն իրենց ծրագրերը բարեփոխելու

12 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ, 155-156:

համար օգտուում էին Հ. Երամեանի մշակած կրթական ծրագրերից: Տեղին է մատնանշել, որ խաչիկ Լեւոնեանի եւ Նշան Գարասեֆերեանի պաշտօնավարութեան տարիներին, Վանի ամերիկեան դպրոցները սերտօրէն համագործակցում էին Երամեան վարժարանի հետ եւ Երամեանի դիպուկ արտայայտութեամբ «նըրաւնք հետգհետէ իրենց գուտ ամերիկեան գոյնը փոխեցին»:

Հ. Երամեանը վաստակել էր Վանի ուսուցչապետի տիտղոսը եւ պատահական չէր, որ կրթական եւ դպրոցական խնդիրներ լուծելիս շատերը դիմում էին նրա խորհուրդներին: Վարժարանի թանգարան-մատենադարանն իր նորամուծութիւններով ու հարստութեամբ նոյնպէս օրինակելի էր Վանի բոլոր վարժարանների համար: Կրթութեան օժանդակ միջոցների համար Երամեանը տարեկան բիւջէից որոշակի գումար էր տրամադրում: Դրա շնորհիւ գրքերի թիւն անցնում էր վեց հազարից. կար օտար լեզուներով մեծ ու փոքր ատլասների հարուստ հաւաքածու, 30 բառարան, բնագիտական գործիքների հաւաքածու, կրօնական բնոյթի եւ բնութիւնը պատկերող նկարների հաւաքածու: Բնագիտական հաւաքածուներից բացի վարժարանն ունէր նաեւ հանքային քարերի ճոխ հաւաքածուներ, բեւեռագրուած խեցեղէն անօթներ եւ բեկորներ, հռոմէական, բիւզանդական եւ կիլիկեան դրամների հաւաքածուներ, որոնց մէջ եզակի արժէք էին ներկայացնում Լեւոն Գ.ի ժամանակների ոսկէ դրամներ, խալդեան հնութեան քարէ բեւեռագիր կնիք եւ այլ նիւթեր: Վարժարանն ունէր նաեւ մամուլի ընդարձակ սրահ: Դպրոցը բաժանորդագրութեամբ եւ նուիրատուութեամբ ստանում էր քսանից աւելի հայկական եւ օտարալեզու թերթեր ու հանդէսներ:

Կրօնական առարկաների դասաւանդման համար վարժարանն ունէր հայերէն եւ ֆրանսերէն ձեռնարկների եւ Ս. Գրոց պատմական քարտէզներ: Բնագիտական առարկաների դասերը տարւում էին փորձերով եւ դիդակտիկական այլազան նիւթերով՝ նկարներ, մոդելներ, մոլեխաժներ, գծազրեր եւ այլն: Բարձր կարգերում որոշ թեմաներ պատմութիւնից եւ աշխարհագրութիւնից դասաւանդւում էին ֆրանսերէնով, իսկ օսմանեան պատմութիւնը եւ աշխարհագրութիւնը՝ օսմաներէնով: Վարժարանում հիանալի էր նաեւ գծագրութեան, նկարչութեան, երաժշտութեան, մարմնամարզութեան եւ ձեռարուեստի դասաւանդման դրուածքը: Դեռեւս 80ականների սկզբներին Սաֆար Փեհրիզեանը եւ Վրթանէս Փափազեանը իրականացրեցին բազմաձայն երգեցողութեան փորձեր, իսկ Կոմիտասի աշակերտ վանեցի Խոս-

րով ֆախչանեանը¹³ 1908ին վարժարանում ստեղծեց քառաձայն երգչախումբը:

Մուսուլիի գերմանական հիւպատոս Հոլշթայնը այցելելով Երամեան վարժարան եւ տեսնելով այնտեղ տիրող բարոյակրթիչ միջնորդութիւնը, գրադարան-ընթերցարանը, թանգարան մատենադարանը, գիտական հարուստ հաւաքածոները եւ այլ հրաշալիքներ՝ հիացմունքով յայտարարել է. «Ես եւրոպական հաստատութիւն մը կը գտնեմ՝ ձեր վարժարանին մէջ» եւ խոստանում է 5000 մարկ տարեկան հասոյթ յատկացնել վարժարանին, եթէ վարժարանի յայտագրերում մտցուէր նաեւ գերմաներէնը:

Իր գոյութեան 37 տարիների ընթացքում վարժարանն ունեցել է ինչպէս վերելքի, այնպէս էլ անկումային շրջաններ: Վարժարանի նիւթական մատակարարութիւնը 1884-1885 ուսումնական տարում անմիջապէս վիճակում էր: Երբ Երամեանը օգնութիւն է խնդրում Վանի առաջնորդարանից, որ նոյնպէս նիւթական նեղ վիճակում էր, Պօղոս Մելիքեանը առաջարկում է դպրոցը փակել, սակայն Երամեանը անդդուելի էր՝ «Թէ գաւնմեմ,- առարկում է նա,- ութ տարի խնամելէ յետոյ՝ ես իմ ձեռքովս չեմ կրնար ցրուել՝ երբ արդէն պտուղ տալու վրայ եմ, այլ իրելւ ազգին գաւակները՝ առաջնորդարան կը բերեմ կը յանձնեմ»: Պօղոս Մելիքեանը ստիպուած ստեղծում է յանձնախումբ, որն իր կարգադրութեամբ Վանի շուկայում կազմակերպում է հանգանակութիւն եւ ստացուած գումարով պահւում է վարժարանը: Երբ բոլժման նպատակով 1886ին Երամեանը պէտք է ուղեւորուէր Վիեննա, վարժարանը դարձեալ սատարուեց Վանի առաջնորդարանի կողմից. ստեղծուեց ժամանակաւոր խնամակալութիւն հետեւեալ կազմով՝ Փանոս Կոսպարեան, Փանոս Գափամաճեան, Մկրտիչ Խանիկեան եւ Սահակ Թերլեմեզեան: Խնամակալութիւնն աչքի լոյսի պէս պահեց հաստատութիւնը եւ անխաթար այն վերադարձրեց Երամեանին՝ նրա վեցամսեայ բացակայութիւնից յետոյ:

1885-1886 ուսումնական տարում վարժարանը տուեց իր առաջին շրջանաւարտները՝ Մարտիրոս Նալպանտեան, Մամբրէ

13 Նա եղել է Ս. Էջմիածնի դպրապետ, իրրելւ այցելու ուսուցիչ երաժշտութիւն եւ դասաւանդել նաեւ Վանի Կեդրոնական եւ Սանդիստեան վարժարաններում: Կոմիտասի յանձնարարութեամբ՝ քոֆախտը բուժելու նպատակով, 1913ին նա մեկնել է Գահիրէ, սակայն ամիսներ անց կմեկ է իր մահկանացուն: Թաղուած է Գահիրէի հայկական գերեզմանոցում:

Մկրեան, Լեւոն Սարգսեան, Հրանտ Գոնտաքճեան, Դաւիթ Պօղոսեան եւ Յովակ Ամսարեան. նրանք շուտով դարձան վարժարանի ուսուցչական մարմնի ուղն ու ծուծը:

Օսմանեան կրթութեան նախարարութիւնն ամէն կերպ սահմանափակում էր ազգային դպրոցների զարգացումը. դրա դրսեւորումներից մէկը հայոց պատմութիւն առարկայի դասաւանդման արգելումն էր: Երբ դրուած էր հայոց պատմութեան դասաւանդման խնդիրը, Հ. Երամեանը բոլոր հնարաւոր միջոցներն օգտագործեց, որպէսզի կրթութեան յայտագրերից այն հատուէր, քանի որ «Խնդիրն այն էր, - գրում է նա, - որ եթէ մեր վարժարանը իր առաջնակարգ դիրքով ենթարկուէր այդ կամայական խտութեան, Վանի միւս դպրոցներն ալ պիտի ստիպուէին գեղջել պատմութեան դասը»¹⁴: Երամեանի ճկուն եւ խելամուտէն պատճառաբանուած փաստերի հիման վրայ թուրք վերաքննիչ նախագահը կրթութեան տեսուչին հրահանգում է չխանգարել եւ չմիջամտել Երամեան վարժարանի գործերին, իսկ Երամեանին անձամբ պատուիրում է. «Էֆենտի, դուք գիտցածնիդ ըրէ՛ք եւ մեր պատմութիւնն ընդարձակօրէն սորվեցուցէ՛ք ձեր աշակերտներուն», իսկ յաջորդ օրը, երբ այցելում է վարժարան, ծանօթանում է այնտեղ տիրող կարգ ու կանոնին, գրադարանին, մատենադարանին, թանգարանին, ուսումնական եւ գիտական բազմաչերտ հաւաքածոներին՝ դառնալով տեսուչին ասում է. «Այս վարժարանին մէջ ես անհատական ուժով ի հանդէս եկած կը տեսնեմ այնպիսի առաւելութիւններ, զոր դուք ձեր պետական միջոցներով չէ՛ք կրցած իրականացնել թուրք վարժարաններուն մէջ...»¹⁵:

Վանի կուսակալ Պահրիի¹⁶ վարչութեան օրօք Հ. Երամեանը ենթարկուել է բացայայտ հետապնդումների ու հալածանքների: Պատճառն այն էր, որ Երամեանի վարժարանը Վանի մտաւորականների եւ հասարակական ու քաղաքական գործիչների համար դարձել էր հաւաքատեղի: Այդ մասին Երամեանը գրում է. «... Մեր թաղին մէջ ի խաչ փողոց բնակող զինուորական բժիշկ

14 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ, 277:

15 Ամդ, 270:

16 Ազգութեամբ մահմեդականութիւն ընդունած վրացի էր: Մինչեւ Վանի կուսակալ նշանակուելը նա եղել է Համիդ Բ-ի թիկնապահներից մէկը: Իրրեւ կուսակալ Վանում պաշտօնավարել է 1891-1895 թուականներին: Նրան յաճախ շփոթում են Ադանայի երբեմնի կուսակալ Բահրի Բէյի հետ, որ Եւրոպայում կրթութիւն ստացած բուրդ էր:

Գայմագամ Իսմայիլ պէյ սոյն հաւաքոյթները կը լրտեսէ ու կը պատմէ եղեր Պահրիին, անոր մտքին մէջ մոայլ կասկածներ իւրացնելով մեր դէմ: Այս պատմառաւ Պահրիին ուր որ ինձ հանդիպէր կը կեցցէր զիս եւ «Ֆէսառչի [խռովարար՝ Շ.Ո.] ուսկի՞ց կու գաս, ու՞ր կ'երթաս կը հարցնէր», «գֆեզ բանտերու մէջ պիտի մաշեցնեմ, գֆեզ պիտի կախեմ» սպառնալով ու հայիռելով կ'անցնէր: *Վերջապէս գալիս է յարմար պահը, երբ նա Երամեանին մեղադրում է վանեցի Գէորգ Օտեանի բանտից փախուստի կազմակերպման մէջ: Եթէ չլինէր Աւետիս Միրզախանեանի միջամտութիւնն այս գործում, երեւի թէ Երամեանը բանտ նետուէր, իսկ նրա վարժարանը ընդմիջտ փակուէր: Այդ մասին Հ. Երամեանը գրում է. «Պահրի մաշի սեղանին վրայ իմ հասցէին արդէն քունալից ժահրեր ժայթքած եւ սպառնացած է եղեր դպրոցը փակել եւ զիս ձերբակալել, իբր թէ ես նոյն գիշերը երկու ընկերներով Այգեստանէն յատկապէս քաղաք գացած եմ եղեր՝ Օտեանի փախուստը դիւրացնելու կամ գոնէ իրազեկ ու խորհրդատու գտնուած եմ անոնց արարքին: Միրզախանեան եւ Թերզիպաշեան հագիւ կը յաջողին ետ կեցնել զայն իր մտադրութենէն, խոստանալով երրորդ օրը զիս իրեն տանիլ յանձնել: Երրորդ օրը... Աւետիս Միրզախանեան առանց ինձ սպասելու իր հետ կ'առնէ քիւրտ Շէյխ Խարահիմը եւ կ'երթայ մշմարտութիւնը կը յայտնէ կատղած գազանին՝ թէ հինգշաբթի երեկոյ եւ գիշեր եւ իրենց տունն անցուցած եմ եղեր եւ թէ ինքն կ'երաշխաւորէ իմ անմեղութիւնս»¹⁷:*

Այսպիսով, համիդեան խստակարգն իր բոլոր ծայրայեղութիւններով, անհեթեթ արգելափակումներով ու սահմանափակումներով հանդերձ, այդպէս էլ անկարող դարձաւ կասեցնել հայ մտքի թռիչքն ինչպէս Արեւմտեան Հայաստանում, այնպէս էլ Թուրքիայի հայաշատ գաղութներում:

Ինչ վերաբերում է Վանի վիլայեթին, ապա՝ անկախ կուսակալ Պահրիի հայահալած քաղաքականութեան եւ նրա նենգաւոր կասկածամտութեան «կրթութեան սերը աւելի կը բոցավառէր ժողովրդին բոլոր խաւերը եւ գիւղերու մէջ ալ կը բազմանային դպրոցները»:

Իր քաղաքական հայեացքներով Հ. Երամեանն ունէր չափաւոր եւ զգուշաւոր ազատական ըմբռնումներ: Նա քաջ գիտակցում էր, որ հայ ժողովրդի փրկութեան խարխալը՝ սերունդների կանոնաւոր դաստիարակութիւնն ու տնտեսական խաղաղ զարգա-

ցումն է, որովհետեւ մոլոսովմանական պետութիւններով չըջափակուած ու եռփեղկուած աշխարհագրական եւ հասարակական ոչ նպաստաւոր պայմաններում «յարձակողական կամ յեղափոխական ձեռնարկները» ոչ միայն անօգուտ, այլեւ ազգակործան են, հետեւապէս չպէտք է հրապուրուել այլ ժողովուրդների յեղափոխական նախաձեռնութիւններով, քանի որ նրանց քաղաքական, հասարակական եւ աշխարհագրական միջավայրերը բոլորովին նման չեն մերին: Հ. Երամեանն այդպէս էլ չանդամակցեց որեւէ կուսակցութեան, քանի որ լուսաւորութիւնն ու դպրոցը միանգամայն բաւական էին նրան՝ իբրեւ միջոց ազգին ծառայելու համար: Շատերը նրան մեղադրեցին պահպանողական եւ զգուշաւոր քաղաքական հայեացքների համար, սակայն շատերն էլ բարձր գնահատեցին նրան՝ իր ընտրած ճիշտ ուղու համար: Մի առիթով դաշնակցութեան կուսակցութեան նշանաւոր դէմքերից մէկը՝ Արամը, հրապարակաւ խրախուսում է Երամեանի քաղաքական դիրքորոշումը. «Պահեցէ՛ք դուք ձեր ցարդ հետեւած անկախ եւ անկուսակցական ուղղութիւնը, որով լաւագոյնս պիտի կրնաք ծառայել ազգին: Ես ձեր դատարարակցական դրութիւնն ու ոգին մօտէն ուսումնասիրելու առիթ ունենալով, այսօր մեծապէս կը գնահատեմ զայն եւ իբրեւ ապացոյց՝ ահա ձեզ կը բերեմ կը յանձնեմ Սերոբ Փաշայի որդին, որպէսզի ձեր վարժարանին մէջ կրթուի»¹⁸:

Հ. Երամեանը մեծ կապեր ու յարաբերութիւններ ունէր տարբեր կուսակցութիւնների գործիչների հետ, մշտապէս նրանց յորդորել է զգուշաւորութիւն, գործողութիւնների չափաւորութիւն, ազգային միաբանութեան գաղափարախօսութիւն: Նրանցից շատերը լսել ու հետեւել են նրա մարգարէական խորհուրդներին ու պատգամներին:

Իր սաների մէջ անհատական ձեռներէցութեան եւ գործնականութեան ձգտումներին զուգահեռ, նա փորձում էր նրանց մէջ ձեւաւորել նաեւ ազգային ոգին, նրանց դաստիարակել հայրենասիրական ներշնչումների գաղափարներով, տարբեր իրադրութիւններում նախաձեռնողի եւ կազմակերպողի ունակութիւններով եւ հմտութիւններով:

Հ. Երամեանի քաղաքական համոզմունքներն առաւել յստակեցուեցին 1894ի Սասունի դէպքերից յետոյ, երբ եւրոպական դիւանագիտութիւնը ստանձնել էր դաժան ու անտարբեր հանդիսատեսի դեր այդ հակամարդկային իրադարձութիւնների թատե-

¹⁸ ԵՐԱՄԵԱՆ, Հ., Յուշարձան-Վան-Վասպուրականի, Ա., 164:

րաբեմում: Երամեանի ճիշտ բնորոշմամբ «... դիւանագիտութիւնը ո՛չ խիղճ ունի եւ ո՛չ ամօք, հետեւաբար անօգուտ է եւրոպական միջամտութեան վրայ յայտնել եւ անխորհուրդ քայլեր առնել ցոյցերով, քանի որ մեզ նպաստաւոր չեն ոչ օրումն փաղափակման թիւերը եւ ոչ հայկական նահանգներու աշխարհագրական դիրքը»¹⁹:

Թւում էր թէ 10.000 անմեղ նահատակների արիւնն ու նիւթական անշափելի կորուստները թերեւս պէտք է շարժէին քաղաքակիրթ Եւրոպայի խիղճը եւ քրիստոնէական գլխաւորութեամբ պէտք է դարմանէին գրեթէ կիսաանկախ լեռնականներին պատուհասողած աղէտը:

Իրականում դա այդպէս չէր:

Վանից դուրս. Բենյոլլսը բարեգործական փոքր ակցիա ձեռնարկեց հերոսական Սասունին մարդասիրական օգնութիւն ձեռք մեկնելով, իսկ Վանի անգլիական գերհիւպատոս Հայասէր Հալվարդը՝ իբրեւ իրաւաբան, արդարադատօրէն կազմեց Սասունի աղէտի իրական եւ ճշգրիտ տեղեկագիրը, մինչդեռ «...պահպանողական նախարարութիւնը՝ 95ի վերջերը՝ կարծես անոր նշանաւորութիւնը պատժելու նպատակով, գայմ պիտի կանչէր ի շնորհուկս Երլտըղի գազանի»²⁰, քանի որ օսմանեան ռազմական վարչակարգն ինքն էր ե՛ւ ոճրագործ ե՛ւ դատաւոր ե՛ւ գործադիր:

Տիրող պետական խստակարգը տրամադծօրէն դէմ էր հայերի ոչ միայն առաջադիմութեանը, այլ նաեւ նրա ֆիզիկական գոյութեանը եւ պատահական չէր Թալէաթի հետեւեալ ցինիկ յայտարարութիւնը. «Դուք մեզմէ շատ առաջ անցած ըլլալով՝ պէտք է հարիւր տարի ետ մնաք մինչեւ որ մեք ձեզ հասնիմք»²¹:

Իր կրօնական հայեացքներով Հ. Երամեանը Ռուսոյի օրինակով ոչ թէ ծիսական, այլ զգացմունքների, սրտի կրօնի կողմնակից էր: Նրա կարծիքով քրիստոնէութեան հոլթիւնը ոչ այնքան արտաքին ձեւերն ու ծէսերն են, որքան զգացումը, ներքին փոփոխութիւնը եւ նուիրումը: Երբ Տէր Կարապետ քահանան նրան մեղադրեց առաքելական եկեղեցու վարդապետութեան հակառակ բողոքականութիւն քարոզելու մէջ եւ նրան արգելուեց Աւետարանի կրօնական նիւթերի մեկնաբանութիւնը եւ կիրականօրեայ լսարանի համար կրօնական նիւթերի ընտրութիւնը, նա

19 Աճդ, 290:

20 Աճդ:

21 Աճդ:

համարձակօրէն յայտարարեց. «Եթէ կ'արգիլէք մեզ Աւետարանը կամ Աստուածաշունչը կարդալ ու րացատրել, վերացուցէք ուրեմն զանոնք դպրոցէն եւ ուրիշ դասագրքեր տուէք մեզ, որովհետեւ ոեւէ դաս առանց իմաստի րացատրութեան մեքեմական կը գրտնեմ»²²:

Նա իրաւացիօրէն գտնում էր, որ բոլոր կրօնների մէջ կան ինչպէս ճշմարտութիւններ ու բարոյական սկզբունքներ, այնպէս էլ մոլորութիւններ, մոլեռանդութիւններ ու նախապաշարումներ, որոնք պէտք է նկատի ունենալ: Այդ տեսակէտից քրիստոնէութեան պատմութեան մէջ նոյնպէս քիչ չեն հասարակական ու մարդկային կեանքին վերաբերող այլազան մոլորութիւններն ու փարիսեցիութիւնները: Բացի դրանից քրիստոնէական մոլեռանդութիւնը անթիւ ոճիրների, հաւատաքննական ահռելի հալածանքների, աշխարհաւեր եւ նոյնիսկ եղբայրասպան պատերազմների պատճառ է հանդիսացել: Այսուհանդերձ, քրիստոնէական ոգին անմահ է, որի ցայտուն վկայութիւնը այն նուիրական յանձնարարութիւններ են, որոնք քրիստոնէութեան ծագումից ի վեր արարչագործել են անթիւ 'նուիրեալներ'՝ հիւանդապահներ, բարեգործներ, գթութեան քոյրեր, բժիշկներ, քարոզիչներ, բարձրատիճան կրօնաւորներ եւ այլք, որոնք շատ յաճախ իրենց կեանքը վտանգի ենթարկելով՝ գործել են յանուն գթասրտութեան, բարութեան եւ սիրոյ մեծագոյն արժէքների:

Հ. Երամեանը ելնելով իր կրօնական, հասարակական եւ քաղաքական հայեացքներից տուել է դաստիարակութեան ինքնատիպ սահմանում: Նրա կարծիքով դաստիարակութեան նպատակը երեխայի մէջ ազատութեան, անկախութեան եւ ինքնուրոյնութեան ոգու եւ կամքի զարգացումն է: Նա առաջ է քաշում համակողմանի եւ ներդաշնակ դաստիարակութեան գաղափարը. «Դաստիարակութեան նպատակը չէ՞ սիրտ, միտք եւ մարմին միանգամայն մարգել գուգընթացօրէն: Վերջապէս պէտք չէ՞ որ տուն ու դպրոց համերաշխ գործակցութեամբ աշակերտին մէջ կազմեն կուռնկարագիր ու գործնական ոգի, ներշնչելով միանգամայն սէր ու ձգտում դէպի ազգն, եկեղեցին ու հայրենի քնաշխարհը»²³:

Նա կարեւորում էր երեխաների մէջ խուզարկութեան եւ հետաքրքրութեան ոգին զօրացնելուն. պահանջում էր աւելի ջանք

²² Անդ, 96:

²³ ԵՐԱՄԵԱՆ, Հ., Ծուշարձան վան-վասպուրականի, Բ., Աղեֆսանդրիա 1929, 416:

դնել նրանց ակտիւ ուշադրութեան եւ ինքնուրոյնութեան զարգացմանը, մերժում էր ուսուցիչների եւ ծնողների անհարկի միջամտութեամբ եւ օժանդակութեամբ ուսման մէջ այս կամ այն դժուարութիւնները յաղթահարելու միտումնաւորութիւնը «... ծնողներուն կ'արգիլէին աշխատութեան բռնադատել իրենց զաւակները կամ օգնել, ինչ որ կը ջլատէր անոնց իմֆօզմութեան կարողութիւնը կամ կը խանգարէր միտքը սխալ ուսումներով»²⁴։ Միայն այս ճանապարհով երեխայի մէջ կը մշակուի ինքնակրթութեան, ինքնադրսեւորման ոգին եւ ինքնաշխատութեամբ իր նպատակին հասնելու ձգտումը։ Նա ջանում էր իր սաների մէջ մշակել այն գիտակցութիւնը, որ եթէ որեւէ մէկը չի կարող իրեն եւ ընտանիքին օգտակար լինել՝ ապա չի կարող նաեւ ազգին եւ հայրենիքին ճշմարտօրէն ծառայել։ Վերջապէս ուղղակի եւ անուղղակի բոլոր հնարաւոր միջոցներով ամէն ինչ անում էր, որպէսզի ուսուցիչներին ներշնչէր եւ ուղորդէր «Դէպի դաստիարակութեան եւ ուսուցման սուրբ գործը եւ անոնց օրինակին քարերար ազդեցութեամբ պատրաստել ման աշակերտութիւնը»։

Այս էր Երամեանի իդէալը եւ քառասնամեայ ուսուցչութեան եւ դպրոցավարութեան երկար ու դժուարին ասպարէզում նրա յաջողութիւնների գրաւականը։ Անդրադառնալով իր բազմամեայ մանկավարժական գործունէութեանը նա անկեղծօրէն խոստովանում է. «Անշուշտ ունեցած եմ ձեռնարկիս մէջ ակամայ սայթափումներ կամ սխալներ, եւ սակայն ջանացած եմ յարատւօրէն դիմել դէպի կատարելութիւն՝ որչափ կը ներքին ինձ Վանի միջավայրը, ֆիզիկական դրութիւնս, սահմանափակ զարգացումս եւ միութեան աղբատիկ միջոցներս։ Ջանացի ման աշակերտներուս մէջ սեւեռուն գաղափարն դարձնել թէ՛ իւրաքանչիւր անհատ ապրելու է իտելով մը եւ որուն հասնելու միջոցն է իմֆզիմը կատարելագործելու աշխատիլ ըստ կարի, ինչ որ կը պահանջէ ճշմարիտ յառաջադիմութեան օրէնքը»²⁵։

Վաստակաշատ դպրոցավարն ինչպէս իր, այնպէս էլ ուսուցիչների համար մշակել էր մանկավարժական մի շատ կարեւոր սկզբունք՝ առանց դասին նախապատրաստուելու դասարան չըմտնել։ «Կը պահանջէի, - գրում է նա, - ուսուցիչներէն իրենց աւանդելիք միւթին տէր դառնալ, կամ մարսած լինել զայն եւ բանաւոր այլ հազուադէպ պատճառով մը՝ անպատրաստ գտնուելու պարագա-

24 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ, 163:

25 ԱՆԴ, 165:

յիմ՝ վերամշակութեամբ կամ շահեկան ընթերցումով մը զբաղեցնել աշակերտները»:

Ինչպէս կոմենսկին Երամեանը նոյնպէս դպրոցի յաջողութեան առաջին նախապայմանը համարում էր կարգապահութիւնը. չկայ կարգապահութիւն չկայ եւ դպրոց, հետեւապէս՝ առաջին հերթին ուսուցչից պահանջում էր աշխատանքային կարգապահութիւն: Աններող էր ուսուցչի որեւէ անկարգապահութեան, անտարբերութեան, անփութութեան, հապճեպութեան, անկարողութեան եւ այլ բացասական երեւոյթների հանդէպ: Դրա շնորհիւ էր, որ Երամեանի դպրոցն իր կարգապահութեամբ եւ խնստապահանջութեամբ կենդանի օրինակ էր վանի բոլոր դըպրոցների համար: Երբ Ուսումնական խորհուրդը 1909ին փորձեց վերահսկողութեան իրաւունք հաստատել Երամեան վարժարանի վրայ եւ դրա համար ստանալ առաջնորդարանի կարգադրութիւնը՝ փոխարէնը լսեց հետեւեալ մերժողական պատասխանը. «Դուք Երամեանին մի՛ դպչիք, ընդհակառակն ձեր իրաւասութեան ենթարկուած ծխականները թող ջախան անոր օրինակէն օգտուի»²⁶:

Անուանի ուսուցչապետը առաջնորդւում էր «քիչ, բայց լաւ» մանկավարժական աւանդական սկզբունքով: Ուսուցիչներից պահանջում էր «քիչ նիւթ աւանդել, լաւ մարսեցնել սակայն. երկրորդ՝ քիչ խօսիլ տղոց, ընդհակառակն զանոնք շատ խօսեցնել՝ անոնց պաշարը քրքրելու եւ հետաքրքրութիւնը արծարծելու նպատակով. երրորդ՝ ներշնչել բարձր գաղափարներ կամ տեսլականի ձգտումը, այլ ոչ իւրօքի [ուտոպիա՝ Շ.Ո.] կամ անիրականալի բաղձանքներ. չորրորդ՝ ինքնուրոյն այլ ոչ եսապաշտական ոգի»²⁷:

Սա էր Հ. Երամեանի դաւանած մանկավարժական ուղղութիւնը, սրանով էր պայմանաւորուած նաեւ նրա հիմնադրած կրթարանի յաջողութեան եւ առաջադիմութեան գաղտնիքը:

Իր մանկավարժական գործունէութեան սկզբնական շրջանում Երամեանը ոչ միայն ընդունել է մարմնական պատիժներն իբրեւ դաստիարակութեան մեթոդ, այլեւ կիրառել է այն. «... կը խոստովանիմ, -մեղքի գզացումով գրում է նա,- որ ես ինքնիմ առաջին տարիները ապտակներ կամ խիստ յանդիմանութիւններ տուած եմ այս կամ այն աշակերտին եւ այսօր կը խղճահարուիմ»: Սակայն յետագայում ծեծը բացարձակապէս արգելուեց դպրոցում, փոխա-

26 Անդ, 166:

27 Անդ, 167:

րէնը ամէն ինչ արոււմ էր, որպէսզի վերացուէր անկարգապահութեան պատճառները, քանզի «Համոգուած էի թէ մեր դպրոցավարական միջոցները կամ մեքոսները (système) չեն յարմարիր ամէն միջավայրի կամ ամէն աշակերտի», որովհետեւ ինչպէս ամէն միջավայր ունի իր պահանջները, այնպէս էլ իւրաքանչիւր աշակերտ՝ իբրեւ դատող իմացականութիւն, ազատ ու անկախ անհատականութիւն, ունի իր առանձնայատուկ ընդունակութիւնները, հետաքրքրութիւններն ու նախասիրութիւնները, որոնք ուսուցիչը պէտք է հաշուի առնի եւ ըստ այնմ վերաբերուի իւրաքանչիւրի հետ: Որպէս ուսուցման եւ դաստիարակութեան օժանդակ միջոց Երամեանը կարեւորում էր սովորողների համախումբ զբօսանք-չրջագայութիւնները դէպի դաշտ ու մերձակայ վանքերն ու պատմական հնութիւնները «... գիտութեան կամ քնական աշխարհագրութեան դաս մը աւանդելու եւ միանգամայն զրօնացնելու մտով»: Դպրոցական զբօսանքների ընթացքում տարբեր մտավոր ժանրներին յաջորդում էին մանկական խաղերն ու մարմնամարզական վարժութիւնները, քանի որ «առողջութիւնը կամ ջիղերու մարզամբը մտաւորական ուժերի մշակութեան չափ կարեւոր է»:

Հ. Երամեանն իր մանկավարժական եւ հասարակական գործունէութեան առաջին բարձր գնահատականը Մկրտիչ Խրիմեանից հրապարակաւ ստացաւ 1884ին, երբ նա նախագահում էր վարժարանի տարեկան հանդէսը: Ի մասնաւորի նա ասաց, «...պարոն Համբարձում արդարեւ ամէնուս գեղեցիկ դաս մը կու տայ իր այսօրուայ համարատուութեամբ [հաշուետուութեամբ՝ Շ.Ո.]: ... Թո՛ղ օրինակ առնեն քաղական խորհուրդները եւ հոգաբարձութիւնները, որոնք հանդէպ ժողովուրդին պատասխանատու գտնուելով հանդերձ՝ հաշուետուութենէ կը խուսափին...: Վերջապէս ինչ-որ չկրցան ընել ուրիշ ոչոք աչքեր [ակնարկում է լուծարուած Խնամատարի 80 անդամներին՝ Շ.Ո.] յաջողոց այս մարդը՝ առանց մէկ աչք իսկ ունենալու: Քաջալերեցէ՛ք ուրեմն դուք գայն ի սէր կրթութեան ձեր տղոց եւ 25 որք սաներուն, որոնց խնամակալութիւնը ստանձնած է ինքն միայնակ»²⁸:

37 տարի շարունակ (1878-1915) վարժարանն իր գոյութիւնը պահպանել է Երամեանի տեսչութեան ներքոյ, յաջորդաբար կրելով որբանոց՝ մինչեւ 1888, գիշերօթիկ՝ 1888-1904, Երամեան վարժարան՝ 1904-1915ը: Անուանափոխութիւնները սա-

կայն արգելք չհանդիսացան, որպէսզի այն պահէր ու պահպանէր իր ազգային ոգին եւ մարդասիրական ուղղութիւնը:

1894-1896 զանգուածային կոտորածներից յետոյ²⁹ ինչպէս բոլոր վարժարանները, այնպէս էլ Երամեան վարժարանը մեծ դժուարութիւններ ունեցաւ վերստին բացուելու եւ գործելու համար:

Բայց եւ այնպէս Օգոստոսին դպրոցն սկսեց իր աշխատանքները շնորհիւ ռուսական հիւպատոս Մայեւսկու բարոյական աջակցութեան եւ Միս Քեմբլի³⁰ նիւթական օգնութեան: Իր նամակներից մէկում Միս Քեմբլը, Հ. Երամեանին բնութագրելով որպէս Հայ Պէստալոցցի եւ կարեւորելով Երամեան վարժարանի դերը Վանի միւս բոլոր վարժարանների գոյապահպանութեան գործում, գրում է. «Ասկէ զատ այս վարժարանը մատուցած է հասարակութեան անգնահատելի ծառայութիւն մը ըլլալով իբրեւ օրինակ եւ մղիչ ոյժ ուրիշ դպրոցներու: Անկա եղած է ամենէն զօրաւոր ազդակներէն մին, բոլոր միւս դպրոցները ներկայ համեմատական բարձրութեան հասցնողը, ոչյոսի եւ իր անկումին անխուսափելիօրէն պիտի հետեւի միւս բոլոր դպրոցներու կրթական չափանիշներու ընդհանուր անկումը»³¹:

Եւ այսպէս, Հ. Երամեանը Օգոստոսի 1ին յայտարարեց դպրոցի վերաբացման լուրը: Մինչեւ Օգոստոսի վերջերն աշակերտների թիւը հասաւ 280ի: Վարժարանը համալրուեց նոր ուսուցիչներով՝ Ղեւոնդ Սրուանձտեանց, Կարապետ Աճեմեան, Բարունակ Տէր Թարութիւնեան եւ ուրիշներ: Վանի Զարգերի ժա-

29 1894-1896 Համիդ Բ-ի սանգագերծած զանգուածային կոտորածները խլեցին աւելի քան 300000 հայ կեանք:

30 Միսիոներուհի Միս Գրեյս Քեմբլը Վանում 80ականներին Միս Ջոնսոնի հետ հիմնադրեց իգական միսիոներական վարժարան, որի տեսչուհին ինքն էր: Ամերիկայում մա ստացել էր բժշկական փայլուն կրթութիւն: Միաժամանակ մա դարձաւ Ռեյնոլդսի օգնական բժիշկը, ընդարձակեց եւ հարստացրեց դեղատունը, մի բան, որ այդ ժամանակ հազուագիւտ երեւոյթ էր պետական եւ քաղաքային այդ կարգի հաստատութիւնների համար: Նրա մասին Հ. Երամեանը սիրով գրում է. «Միս Քեմբլը շատ շուտ սորվեցաւ հայերէն գոր կը խօսէր գրագէտ հայուհիի մը պէս: Նա հետաքրքրուում էր նաեւ Հայ գրականութեամբ եւ շատ գրքեր կը կարդար: Ջմայլանքով կը խօսէր Եղիշէի, Որբմեանի եւ Մելիքեհեդէկ Մուրատեանի հոգեշունչ երկերու մասին, որոնց ազդեցութեան ներքեւ նա սրտով եւ հոգով հայ դարձաւ» (Ամդ, 413):

31 Ամդ, 418-419:

մանակ, 1896ի Յուլիսին, վարժարանի հարուստ մատենադարան-գրադարանն իր կազմարարի հետ միասին այրուել էր: Կովկասի Հայ բարեգործական ընկերութիւնը 300 հատոր գիրք ուղարկեց Վան. այն անվտանգ եւ անվճար փոխադրեց Մայեւսկին: Վարժարանին իր հարուստ գրադարանը նուիրեց նաեւ Միս Քեմբըլը: Իսկ Մարտիրոս Նալպանտեանը Քեմբըլի միսիոներական իր-գական վարժարանից ստացած տարեվարձով 80ականներին հիմ-նադրեց վարժարանի բնագիտական թանգարանը:

Հ. Երամեանը անգնահատելի դեր կատարեց Վանի ուսուց-չական կեանքում՝ բարձրացնելով այն բարոյապէս ու նիւթապէս: Վանի ուսուցչութիւնը Խրիմեանի եւ Փորթուգալեանի շնորհիւ 80ականներին դեռ նոր էր դուրս եկել տէրթողիկեան շրջանից եւ, ցաւօք, այն դեռեւս ներկայացնում էր անդէմ եւ անգոյն մի զանգուած՝ կամակատար հոգաբարձու-աղայական խաւի քմահա-ճոյքներին: Դեռեւս 80ականներին վանեցիները քամահրանքով էին մօտենում ուսուցչի մասնագիտութեանը. «ուսուցչին ո՞վ աղ-ջիկ կտայ» կամ «մեմբ ուզում եմ որ մեր որդին մարդ դառնայ եւ ոչ ուսուցիչ» եւ այլն:

Այս ասպարէզում Հ. Երամեանի ծաւալած գործունէութիւ-նը, իսկապէս, յեղափոխութիւն էր, քանի որ նրա անկոտրում կամքի համար անկարելին գոյութիւն չունէր: Նրա գերագոյն նպատակն էր վարժարանը բարձրացնել լիկիոնի մակարդակի՝ հետեւապէս նպատակադրուել էր տարէցտարի բարեկարգել կրթական ծրագրերը, նիւթապէս ու բարոյապէս այն հասցնել բարձր մակարդակի. այդ նպատակը պիտի իրականացնէր ամէն գնով, արգելքներն ու դժուարութիւնները չպէտք է կասեցնէին նրա առաջընթացը: Գլխաւոր արգելքն ուսուցչի մասնագիտու-թեան անտեսուած եւ արհամարհուած լինելն էր: Այդ ուղղու-թեամբ էլ նա ծաւալեց իր գործունէութիւնը: Առաջին հերթին մեծ թուով շրջանաւարտներ գործուղեց Եւրոպա՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու եւ ազգային դպրոցներին զարկ տալու նպատակով: Բացի դրանից ուսուցչական աշխատանքի հրաւիրեց Վանի նշանաւոր գերդաստանների երիտասարդներին՝ վերջնակա-նապէս տապալելով հասարակական այն թիւր կարծիքը՝ իբր դպրոցը ապաստարան է անպէտք եւ խեղճ ու կրակ տարրերի հա-մար: Եւ վերջապէս, ամենախոհեմ քայլն այն էր, որ նա ուսու-ցիչների աշխատավարձը հետգհետէ բարձրացրեց այնքան, որ մինչեւ անգամ «կոկոզամիտ շատ ծնողներ, որոնք «վարժապետ» իբր թէ նախատակամ անունով յորջորջում էին ուսուցիչներին», այ-

սուհետ փնտրում էին նրանց հետ ջերմ ու բարեկամական յարաբերություններ հաստատել: Երամեանի ամենամեծ ձեռքբերումն այն էր, որ նա պարտադրեց վանեցիներին, որպէսզի նրանք ընտանիքի տնտեսական բիւջէից, որոշակի կլորիկ գումար յատկացնեն իրենց զաւակների կրթութեան համար՝ իբրեւ ամենամիտուսափելի պարտք եւ անհրաժեշտութիւն: Եւ այս ջանքերի շնորհիւ էր, որ նրան յաջողուեց վանեցիներից գանձել տարեկան մօտաւորապէս 600-700 տաճկական ոսկի, որն անհաւանական ու բացառիկ երեւոյթ էր այդ շրջանում: Հէնց դա էլ Երամեանին հնարաւորութիւն ընձեռեց լիուլի վարձատրել ուսուցչներին եւ նոյնիսկ հրապուրիչ դարձնել ուսուցչական աշխատանքի փշոտ ու ապերախտ ասպարէզը:

Այսպիսով, Երամեանը, նրա հիմնադրած վարժարանը, նրա ընտրանի եւ պատկառելի ուսուցչական մարմինը, նրա հարիւրաւոր ու հազարաւոր շրջանաւարտ ու կիսաւարտ սաները, բազմաթիւ անձնուէր բարեկամներ ու համակիրներ ստեղծեցին մի միջնորդ, բարոյայ-կրթիչ մի միջավայր, մի տեսակ մտերմիկ մի շրջան, որն ստացաւ «Երամեան օմախ» խորախորհուրդ անունը:

Ուշագրաւ էր, որ Պերպերեան վարժարանի 25ամեակի կապակցութեամբ Երամեանը վարժարանի անունից մեծանուն մանկավարժին ուղարկեց նրա դիմանկարը՝ Եղեռնի նահատակ Գարեգին Հիւսեանի³² լաւագոյն գործերից մէկը: Ի նշան երախտագիտութեան Ռ. Պէրպերեանը շնորհակալական նամակ եւ 30 ոսկի ուղարկեց կոյր Ուսուցչապետին: Մի առիթով նրա որդի՝ Շահանը, Երամեանին յայտնում է. «Համգուցեալ հայրս իր այդ պատկերը՝ իբրեւ քոյր հաստատութեան մը յիշատակ՝ իր աշխատութեան սեմնակին պատէմ կախուած կը պահէր այնուհետեւ»³³:

Վանի առաջադէմ հասարակայնութիւնը նոյնպէս պատրաստուում էր 1903ին մեծ հանդիսութեամբ տօնել Երամեան վարժարանի հիմնադրման 25ամեակը: Այդ կապակցութեամբ նախատեսուում էր կառուցել դպրոցական յարմարաւէտ շէնք՝ անձնա-

32 Աւարտել է Երամեան վարժարանը, Կ. Պոլսի ազգային դպրոցներում աշխատել է որպէս ուսուցիչ, այնուհետեւ Աշմակուել է Պէշիկթաշի վարժարանի տեսուչ, 1915ի Ապրիլին բազմաթիւ մտաւորականների հետ մառնապէս ձերբակալուել եւ հայ տարագիրների հետ մահատակուել է Փոքր Ասիայի սպանդանոցներում:

33 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ, 28:

կան բնակարանով հանդերձ, փոխարեն այն բոլոր զոհողութիւններին, որ Երամեանը վարժարանի գոյատեւման համար 13 տարի առաջ հայրական տան հետ միասին վաճառել էր նաեւ իր կալուածքներն ու ընտանեկան զարդերը: Այդ նպատակով 1903ի փետրուարին ստեղծուեց գործադիր յանձնախումբ³⁴, որ 1904ի սկզբներին գնեց Մարգար Թոխմախեանի տունն ու պարտէզը՝ Այգեհատանի Սխգայի փողոցում: Շինարարական աշխատանքների համար ստեղծուեց նոր յանձնախումբ: Նոյն տարուայ Մայիսին Սահակ եպիսկոպոս Բարգեւանդեանը կատարեց հիմնարկէքի պատշաճ արարողութիւնը: Քանի որ հանգանակութեան հետ եղան որոշ խնդիրներ՝ 1905ին չէնք յանձնուեց Երամեանին կիսակառոյց եւ կահազուրկ: Այդ մասին նա գրում է. «Եւ 1905ին անհրաժեշտ կահաւորումներ կատարել եւ վարժարանը նոյն տարւոյ Սեպտեմբերին նոր շէնքը փոխադրել վերջ՝ պիտի հարկադրուէի այնուհետեւ ամէն տարի մեր վտիտ պիւտնէն կյոյրիկ գումարներ յատկացնել շէնքի աստիճանական կահաւորման եւ քարեզարդութեան»³⁵:

Տարբեր պատճառներով վարժարանի 25ամեայ հանդիսութիւնն այդպէս էլ տեղի չունեցաւ, բայց եւ այնպէս բարձրաստիճան եկեղեցականների եւ անուանի մտաւորականների կողմից ստացուեցին բազմաթիւ շնորհաւորական գրութիւններ ու նամակներ: Նշենք, որ Կ. Պոլսի պատրիարք Մ. Օրմանեանը օրհնութեան կոնդակ յղեց, որով վարժարանը հռչակուեց եւ անուանակոչուեց Երամեան:

Վահան Փափագեանը³⁶ 1924ի Օգոստոսին «Հայրենիք» ամսագրում հանդէս է եկել ծաւալուն յօդուածաշարով, որտեղ անդրադարձել է Վանի առաջնակարգ դպրոցներին եւ մտաւորականութեանը, քննարկել է 80ականներից մինչեւ ցեղասպանութիւնն ընկած ժամանակաշրջանի Վանի դպրոցների ուղղութիւնը, տուել

34 Գործադիր յանձնախումբն ունէր հետեւեալ կազմը՝ Աւետիս Թերզիպաշեան, Իգնատիոս Հիւսեան, Մկրտիչ Ջրբաշեան, Մարկոս Երամեան եւ Մարտիրոս Նալպանտեան:

35 Անդ, 31;

36 Վահան Փափագեանը Տէր Մեսրոպ Բախանայ Փափագեանի կրտսեր որդին էր: Նա իր նախնական կրթութիւնն ստացել է Երամեան վարժարանում, այնուհետեւ ուսումը շարունակել Կովկասի երկրորդական եւ քարճրագոյն դպրոցներում: 1904-1915 թուականներին «Կոմս» եւ «Բժիշկ» ծածկանուններով գործել է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում:

դրանց շուրջ համախմբուած մտաւորականութեան ազգային եւ քաղաքական հայեացքների ամփոփ վերլուծականը: Յօդուածաշարն ուշագրաւ է այն առումով, որ ի շարս բազմաթիւ հարցերի հեղինակը խորութեամբ անդրադարձել է նաեւ Հ. Երամեանի հասարակական ու լուսաւորական գործունէութեանը, կարեւորել է նրա հիմնադրած վարժարանի տեղն ու դերը Վանի մշակութային կեանքում, ըստ ամենայնի դիտարկել է վարժարանի կրթական ծրագիրը, նպատակը եւ ուղղուածութիւնը: Յօդուածագիրը բարձր է գնահատել Հ. Երամեանին՝ որպէս մեծ կամք եւ հզօր բանականութիւն ունեցող անհատ, արժեւորել է Երամեան վարժարանի դերը, քանի որ «կրթական տեսակէտից, դրուած էր լուրջ հիմքերի վրայ: Եւ պէտք է ասել, որ ամէն ջանք գործ էր դրուում յետ չմնալու կրթութեան նորոյթներից, բայց գլխաւոր թերին «Որբանոցի» դաստիարակութեան մէջ էր»: Յօդուածագիրը զարգացնում է այն միտքը, որ վարժարանի ինչպէս աշակերտութիւնը, այնպէս էլ ուսուցչական մարմինը հեռու էր հասարակական շարժումներից եւ «վտանգաւոր» հոսանքներից եւ չնայած այն բանի, որ այն տուել է հմուտ վաճառականներ, ուսուցիչներ, գործնական մարդիկ, սակայն «չի տուել հասարակական ոգի ու ջիղ ունեցող կենսունակ երիտասարդութիւն, որուն յատուկ է թռիչքը, գեղեցիկ յափշտակութիւնը, մանաւանդ ժողովրդի հետ մօտ շփում ունենալու բաղձանքը ... մի խօսքով, այդ դպրոցը պատնէշել է նրանց ուղեղները: ... Նոյնը չէ՞ր Սանասարեանը: Այս երկու մասնաւոր դպրոցներն ալ թէւ տուել են հասարակական գործիչներ, բայց դժբախտաբար նրանք եղել են անարիւն, անգոյն ու անհոգի գործիչներ»³⁷:

Մինչդեռ, Վ. Փափագեանը կարծում էր, որ Մկրտիչ Փորթուզալեանի դպրոցը ժամանակաշրջանի ըմբռնմամբ բուրժուական դպրոց էր, մանկավարժական նոր պահանջներին համապատասխան չափանիշներով եւ կրթական ծրագրերով: Դպրոցն ունէր գործնական ուղղուածութիւն, կառուցուած էր ժողովրդավարական սկզբունքների հաստատուն հիմքերի վրայ: Կրթական մակարդակով թէեւ զիջում էր Երամեան վարժարանին, սակայն աւելի կենդանի էր ու անկաշկանդ, աւելի հաղորդակից արտաքին աշխարհին, ժողովրդին եւ նրա շարժումներին: Վարժարանի կրթական մակարդակը եւ մանաւանդ ժողովրդավարական դաստիարակութիւնը կանոնաւոր հիմքերի վրայ դրուեց յատկապէս

37 Ի Հայրենիք, Կ. Պոլիս 1924, Բ., թիւ 10, Օգոստոս 105:

1907-1908 թուականներին: Ինչպես յօդուածագիրն է շեշտադրում, այս երկու դպրոցների շուրջ համախմբուած նորահաս սերունդի եւ մտաւորականութեան միջեւ մշտապէս խմորուում էր խուլ պայքար, որն աւելի շուտ պայքար էր խրիմեանական ժողովրդավարութեան եւ փորթուգալեանական բուրժուական մտածելակերպ ունեցող մտաւորականութեան միջեւ: Այս պայքարում, անշուշտ, յաղթանակեց ժողովրդավարական սերունդն ու գրաւեց հասարակական եւ կրթական կեանքի բոլոր բնագաւառները:

Վ. Փափազեանի համոզմամբ Հ. Երամեանը աղաւաղուած եւ թիւր տեսակէտներ ունէր դաշնակցութեան մասին ընդհանրապէս, քանի որ՝ «Նրա կարծիքով դաշնակցութիւնը միայն ոռւմբի եւ տերրորմների կուսակցութիւն է», որ վարում են հայդուկները, նա միայն քանդելու, յեղափոխելու նպատակ ունի եւ որ, գլխաւորն է, հաշուի չի առնում ժողովրդի գոյութեանը սպառնացող վտանգները:

Հ. Երամեանն անդրադարձել է Վ. Փափազեանի յօդուածաշարին եւ նոյն ամսագրում հանդէս եկել պատասխան յօդուածով, որտեղ հանգամանօրէն ներկայացրել է իր նկատառումներն ու դիտողութիւնները՝ կապուած Երամեան վարժարանի ուղղութեան եւ իր հասարակական, քաղաքական հայեացքների քննադատութեան հետ:

Երամեանի հասարակական, լուսաւորական գործունէութիւնը միանշանակ ցոյց է տալիս, որ նա յեղափոխութեան ոգուն եւ հայ ժողովրդի ազատագրական նպատակներին ընդհանրապէս հակառակ չի եղել: Նկատի ունենալով Արեւմտեան Հայաստանի աշխարհագրական եւ քաղաքական աննպաստ կացութիւնը, պարզապէս կանխահաս է համարել դաշնակցութեան անհաշուենկատ գործողութիւնները: Հ. Երամեանը իրաւացիօրէն կարծում էր, որ առաջին հերթին պէտք է զարկ տալ ժողովրդի բարոյական ու մտաւոր դաստիարակութեանը, իսկ երբ տնտեսական ու քաղաքական նպաստաւոր պայմաններ կստեղծուեն թուրքիայում, միայն այդ ժամանակ ժողովուրդը նոյնպէս կը գիտակցի եւ կը զինուորագրուի ազատագրութեան գործին, ինչպէս դա արեցին բուլղարներն անկախութիւնից առաջ: Ինչ վերաբերում է յօդուածագրի այն դիտողութեանը, որ Երամեան դպրոցը չի տուել հասարակական ոգի եւ ջիղ ունեցող կենսունակ երիտասարդութիւն եւ որ դաստիարակութեան ոչ ճիշտ դրուածքը «պատմել է մրանց ուղեղները»՝ ապա Երամեանը տալիս է տրա-

մարանօրէն պատճառաբանուած հետեւեալ պատասխանը. «Եւ երբեք պատմիշած չէի մեր աշակերտաց մտքերը, որոնց առջեւ՝ իմ պատմութեան դասերով՝ շատ լայն կը բանայի անգլիական, ամերիկեան եւ ֆրանսիական յեղափոխութեանց տիեզերական յառաջադիմութեան հորիզոնները, պատկերացնելով անոնց առջեւ նաեւ հին Յունաստանն ու Հռոմը: Իմ սկզբունքն էր եղած ռզնւորել նոր սերունդը ազատութեան քաղցր հեռանկարներով, բայց եւ միանգամայն սովորեցնել անոնց երազային յոյսերէն աւելի աչքի առաջ ունենալ անողոք իրականութիւնը»³⁸:

Սա էր Երամեանի տեսակէտն ու դիրքորոշումն այս հարցում:

Յայտնի է, որ քաղաքական նպաստաւոր պայմաններն իրենց բարերար ազդեցութիւնն են թողնում ինչպէս ժողովրդի բարեկեցութեան, այնպէս էլ կայուն եւ ապահով երաշխիքներ են ստեղծում դպրոցների զարգացման եւ կրթութեան ծաւալման համար: Դրա վառ ապացոյցներից մէկը Հ. Երամեանի բերած հետեւեալ վիճակագրութիւնն է. Ժ. Ղարի 60ական թուականներին Վանում հաշոււ էր ընդամենը 1000 աշակերտ, 80ական թուականներին՝ նրանց թիւը եռապատկուել էր (3000 աշ.), իսկ 1908-1914 թվականներին այն հասնում էր 5000ի³⁹: Ի դէպ, այդ ցուցանիշը բարձրացել էր ոչ այնքան վանեցիների բնական աճի շնորհիւ, որքան ստեղծուած քաղաքական նպաստաւոր կացութեան արգասիք էր:

Մանկավարժական նոր պահանջներին համապատասխան բարեփոխում էին նաեւ կրթական ծրագրերն ու դասագրքերը: Հետզհետէ մեծանում էին նաեւ դպրոցական բիւջեները, սահմանում էին մրցակցութիւն գաւառային եւ քաղաքային դպրոցների միջեւ, ծաւալում էին նաեւ լսարանների եւ գրադարանների գործունէութիւնը. «Օտարներն անգամ զարմամբով կը դիտէին եւ կը փառաբանէին մեր այդ սլացիկ յառաջադիմութիւնը», հպարտութեամբ արձանագրում է Հ. Երամեանը:

1908ին Երամեան վարժարանում կրթութիւն էին ստանում 375 երկսեռ աշակերտ, ուսման դասընթացը 12 տարի էր: Կրթական ծրագրով այն մէկ աստիճան բարձր էր ռուսական դպրոցիմ-

38 Անդ, 105-106:

39 ԵՐԱՄԵԱՆ, Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Բ., Աղեփամդրիա 1929, 98-99:

նազիայից: Վարժարանում հին լեզուներ չէին աւանդուում, արեւմտահայ դպրոցներից թերեւս միակը, որտեղ չորս տարի անընդմէջ դասաւանդուում էր ռուսերէն: Հրաշալի էր դրուած նաեւ ֆրանսերէն, օսմաներէն, հին ու նոր հայերէն լեզուների առարկայական դրուածքը: Մեծ ուշադրութիւն էր դարձուում երեխաների ֆիզիկական դաստիարակութեանը, չաբաթը երեք անգամ անց էր կացուում մարմնամարզութիւն՝ հայ սպայի ղեկավարութեամբ:

Այդ շրջանում վանեցիներն իրենց միջոցներով պահում էին 30 դպրոց՝ 5104 աշակերտով (3200 տղայ, 1904 աղջիկ)՝ տարեկան 5345 օսմ. լիւրայի բիւջէով: Բացի դրանից, վանի նահանգում գործում էր 136 հայկական դպրոց՝ 6200 աշակերտով (5500 տղայ, 700 աղջիկ)՝ 2700 լիւրա բիւջէով: Ազգային կրթութեան համար ընդամէնը ծախսուում էր տարեկան 8045 օսմ. լիւրա, որից 300ը նուիրում էր ամերիկեան միսիոներութիւնը, իսկ 378ը վճարում էր կառավարութիւնը՝ (290ը քաղաքի, իսկ 84ը գիւղական դպրոցներին), մնացած մայր գումարը վճարում էր ինքը՝ վանի հայ ազգաբնակչութիւնը⁴⁰:

Հ. Երամեանի երազանքն էր՝ ուսումնական բոլոր ճիւղերի գծով վարժարանը մօտեցնել եւրոպական երկրորդական դպրոցների աստիճանին կամ այն վերածել լիկէոնի, որի գերազոյն նպատակն էր «Ուսումնասիրողի երիտասարդութեանը մայրենի հողի հետ կապուած պահել եւ ըստ կարելոյն տալ ամոր քաղաքացի կրթութիւնը ազգային շունչով»⁴¹:

Փաստօրէն Կոյր Ուսուցչապետը նախագծել էր Հայաստանի սրտում՝ վանում, բարձրագոյն ուսումնական հաստատութիւն հիմնադրելու ազգային ծրագիրը: Սակայն, այդ համարձակ ծրագիրն իրականացնելու համար համապատասխան միջոցներ չունէր եւ յոյս էլ չունէր, թէ տեղում կարող էր հայթայթել խոշոր ծաւալի գումարներ: Հետեւաբար՝ նրա երկրորդ ուղեւորութեան նպատակը, որ նա ձեռնարկեց 1913ի Սեպտեմբերին, համազգային օգնութեան եւ բարոյական աջակցութեան միջոցով այդ վիթխարի ծրագրի իրագործումն էր:

1913ի Սեպտեմբերի 26ին Հ. Երամեանն իր երկու ուղեկիցների՝ Հրաչեայ եւ Ոստանիկ Յովհաննիսեանների հետ հաս-

40 Վանի Երամեան վարժարան, Կ. Պոլիս 1914, 26:

41 Անդ:

նույն է Վաղարշապատ, որտեղ նրանց դիմաւորում է Վրթանէս վարդապետ Անդրանեանը: Յաջորդ օրը նա ներկայանում է Վեհափառ Տէր Գէորգ է Կաթողիկոսին եւ նրան է յանձնում Վանի առաջնորդ Սուրաճեան Սրբազանի իրեն տուած վկայաթղթերը: Երամեանը երեք ամիս մնաց Կովկասում, մասնակցեց Գէորգեան ճեմարանի հիմնադրման 40ամեայ տարելիցին եւ գրերի գիւտի 1500 ամեակին նուիրուած յոբելեանական արարողութիւններին⁴²:

1913ի Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին Հ. Երամեանը Մշակ եւ Հորիզոն թերթերում հանդէս է եկել Վանի եւ նրա խնդիրների մասին արժէքաւոր յօդուածներով: Այդ առիթով նա մօտիկից ծանօթացաւ եւ շփուեց Հորիզոնի խմբագիր Արշակ Զամալեանի, նաեւ Եղնիկ քահանայ Երզնկեանցի եւ Զէրֆէզեանի հետ, որոնք խմբագրում էին Հովիտ շաբաթաթերթը:

1913ի Դեկտեմբերի 14ին Հայ բարեգործական սրահում Հ. Երամեանը կարդացել է դասախօսութիւն՝ նուիրուած Արեւմտեան Հայաստանի տնտեսակաշն, քաղաքական եւ մշակութային հարցերին: Դասախօսութեանը ներկայ էին մագիստրոս առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը, մտաւորականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ: Իր ճառում Երամեանը քննադատում է ցարական Ռուսաստանի անտարբերութիւնը հայկական հարցի վերաբերեալ: Նա խստօրէն քննադատում է նաեւ արեւելահայ դրամատներին այն բանի համար, որ նրանք Վանում եւ Կարինում անգամ մէկ հողային բանկ չհիմնեցին, չհիմնեցին, նաեւ ոչ մի վարժարան ու ապաստարան հայ որբերի համար:

Մամուլն ըստ ամենայնի լուսաբանում էր Հ. Երամեանի կովկասեան շրջագայութիւնների նպատակը, լայնօրէն մեկնաբանում էր նաեւ Վանում բարձրագոյն դպրոց բացելու նրա ծրագրերը: Այդ մասին խանդավառութեամբ ծանուցում է նաեւ Մկրտիչ Փորթուգալեանի Արմենիա հանդէսը⁴³: «Վանի Երամեան վարժարանի հիմնադիր տեսուչ Տ. Հ. Երամեան, արձանագրում է

42 1913ի Հոկտեմբերի 12-15ը՝ 10 տարի ուշացումով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ հանդիսութեամբ տեղի ունեցաւ գրերի գիւտի 1500 ամեակը՝ «Համօրէն հայ ազգի պատգամաւորներուն մասնակցութեամբ»:

43 Արմենիա հանդէսը 1885իմ հիմնադրել է Մ. Փորթուգալեանը Մարսելում: 1914ի Մայիսիմ տեղի ունեցաւ Մ. Փորթուգալեանի հասարակական, քաղաքական, հրապարակախօսական եւ մանկավարժական գործունեութեան 40ամեակը եւ Արմենիա հանդէսի 25ամեայ յոբելեանական հանդիսութիւնը:

հանդէսը,- որ էջմիածնի մէջ կատարուած մեծ յոբելեանի հանդէսին մասնակցած է՝ Վասպուրականի ներկայացուցչի պաշտօնով, Թիֆլիզ ալ երթալով հանգանակութիւն ձեռնարկած է: Կը յուսամք որ Կովկասի հայերը պիտի գիտնան գնահատելով քաջալերել Վանի այս բազմավաստակ եւ անվհատ կրթական գործչի ձեռնարկը, որի օգտակարութիւնը երաշխաւորութեան չկարօտիր այլեւս, իրեն վրայ ունենալով այնտեղ իր խոստացած արդիւնքները եւ երկարատեւ ձեռնարկը»⁴⁴:

Գրեթէ նոյն օրերին Վանից դէպի էջմիածին եւ Թիֆլիս անցնելով՝ Լոնդոնէն հրատարակուած դոկ. Բեյնոլլըսը՝ Վանու մամերիկեան քուէջ հիմնադրելու նպատակով: Բժիշկ միսիոները, որն իր կեանքի 40 տարիներն ապրել էր Վանում, նոյնպէս համակարծիք էր այնտեղ բարձրագոյն դպրոց բացելու Երամեանի ծրագրին: Այդ մասին ծանուցում է Մանչեստրից ստացած Բիւզանդիոնի հետեւեալ թղթակցութիւնը. «Նոյեմբերի 7ին, 1913, Վանի ծանօթ հայասէր Տոքթ. Բեյնոլլս քանախօսութիւն մը ըրաւ, ատենապետութեամբ Գեորգ եպիսկոպոս Իւրիւնեանի, ի ներկայութեան Անգլիայի եւ հայ երկսեռ հասարակութեան: Բանախօսը շնորհակալ եղաւ հաւաքոյթը սարքողներէն, յետոյ անգլերէնով բացատրեց Վանայ եւ շրջակայից բարձրագոյն կրթութեան պէտքը»⁴⁵:

Երեքամսեայ կովկասեան խոստումնալից շրջագայութիւնից յետոյ Հ. Երամեանը 1914ի Յունուարի 1ից իր միսիոն չարունակեց Կ. Պոլսում «... որու դուռները հայութեան առջեւ կը բացուէին բարենորոգումներու գեղածիծաղ հեռանկարով եւ պիտի գոցուէին հայութեան բնաջնջումի սկզբնաւորութեամբ», - ցաւով արձանագրում է նա:

Պոլսում Երամեանը մնաց վեց ամիս. բնակւում էր Բերաթաղամասում, ազգային հիւանդանոցի բժշկապետ դոկտոր Ճելալեանի տանը: Այս շրջանում նա մօտիկից չփուեց Մ. Օրմանեանի, հանրաճանաչ երգիչ Արմենակ Շահմուրադեանի, Կոմիտասի եւ այլոց հետ: Առիթից օգտուելով նա այցելեց Ֆրանսիայի դեսպան Պոնբարին՝ խնդրելու նրա միջնորդութիւնն Ալիանա Ֆրանսէզին՝ Երամեան վարժարանի նպաստներն աւելացնելու ազնկալիքով: Երամեանի Պոլիս ուղեւորութեան հիմնական նպատակը նոյնպէս հասոյթի նորանոր աղբիւրներ գտնելն էր՝ իր ծրագրերն իրականացնելու համար: Թերեւս այդ պատճառով էր,

44 Ի Արմենիա, Մարսել 1913, 12 Նոյեմբեր, թիւ 15:

45 Ի Բիւզանդիոն, Կ. Պոլիս 1914, Նոյեմբեր, 5/18, թիւ 5190:

որ այդ օրերին Պոլսում գտնուող Օլգենին Բերեզովսկու խորհուրդով նա ներկայացաւ նաեւ Ռուսաստանի դեսպան Գիրսին: Դեսպանը խոստացաւ նամակ յղել Պետերբուրգ պատկան մարմիններին՝ 1000 ռուբլու փոխարէն (1911ից վարժարանը ստանում էր ռուսերէնի դասաւանդման համար) տարեկան 4000 ռուբլի յատկացուէր վարժարանին:

Պոլսաբնակ նախկին երամեանականների նախաձեռնութեամբ 1914ի Մարտի 22ին Բերայի էրմիս Սիլլոդոսի սրահում կազմակերպուեց Հ. Երամեանի մանկավարժական գործունէութեան 40ամեայ յօբելեանը: Հանդիսութեանը մասնակցում էին Զաւէն պատրիարքը, մտաւորականներ, կրթութեան եւ մշակոյթի նշանաւոր ներկայացուցիչներ, նաեւ՝ պոլսաբնակ վանեցիներ: Հանդիսութեան կազմակերպիչն ու նախագահը Վահան Փափազեանն էր: Արարողութիւնն սկսուեց Կ. Պոլսի նախկին պատրիարք Մ. Օրմանեանի շնորհագիր նամակի ընթերցումով: Հանդիսութեան բացման խօսքում Վ. Փափազեանը ներկայացրեց հաւաքոյթի նպատակը, իսկ նախկին ընթացաւարտների անունից յօբելեարին նուիրուած ուղերձը կարդաց Գեղամ Վանիկեանը: Հայրենակիցներից շնորհակալական խօսք ասացին փաստաբան Կարապետ Սօլաքեանը, Մարկոս Նաթանեանը եւ ուրիշներ:

Խօսեցին նաեւ ազգային երեսփոխաններ, հրապարակագիրներ, ուսուցիչներ, որոնք յատկապէս ընդգծեցին Երամեանի կեանքի ու գործունէութեան կարեւոր դրուագները: Խօսեց նաեւ Գրիգոր Զոհրապը: Իրեն յատուկ պերճախօսութեամբ նա գնահատանքի հետեւեալ խօսքերն ուղղեց Վանի Ուսուցչապետին. «Ամէնքն ալ այս ծերունին կը յարգեն իբր մտքի, կրթութեան վերերան մը, իսկ ես, Պարոն Երամեան, Զեր մէջ կը տեսնեմ եւ կ'ողջունեմ Վիպասան մը. Դուք ոչ թէ վէպ գրած էք, այլ Զեր կեանքը վէպ մը եղած է, ամէնէն առասպելականը չգրեցիք Դուք, այլ ապրեցաք անոր մէջ...: Լոյսէ գուրկ, լոյս տարածեցիք»⁴⁶: Պատասխան խօսքում Երամեանը յուզմունքով նշում է. «Ես պարտքս միայն կատարած եմ, թէ 11 տարեկանէս լուսագուրկ կեանքիս հաճոյքը փնտռած եմ ուսանելու եւ ուսուցանելու մէջ, իբրեւ կեանքի կանոն առնելով ամենեւին գործը չգոհել հաճոյքին եւ նշանաբան ընտրելով ընել լաւը եւ եթէ կարելի է լաւագոյնը»⁴⁷:

⁴⁶ Ի Ազատամարտ, Կ. Պոլիս 1914, Մարտ 11/24, Թիւ 1460:

⁴⁷ ԵՐԱՄԵԱՆ, Հ., անդ, 267:

Գ. Զոհրապի նախաձեռնութեամբ եւ մտերիմների աջակցութեամբ Կ. Պոլսում նոյն թուականին հրատարակուեց «Երամեան վարժարան» փոքրածաւալ գրքոյկը, որի մէջ համառօտագրուած ներկայացուել է վարժարանի 36 տարուայ գործունէութիւնն ու պատմութիւնը: Տպագրական ծախսերը փակելու համար կազմակերպուեց թատերական ներկայացում՝ Զարիֆեանի խմբով: Գրքոյկի հրապարակման աշխատանքներին մասնակցում էին նաեւ Արշակ Գարակէօզեանը, Սիմոն Գայսերեանը, Գրիգորիս Երամեանը, հայկական բանկի տնօրէն Թադուոր Սուքիասեանը եւ ուրիշներ:

Սակայն Երամեանի ծրագրերն իրականացնելու համար տեւական ու հզօր միջոցներ էին հարկաւոր: Թերեւս այդ պատճառով կեդրոնական վարչութեան յանձնարարութեամբ Ուսումնական խորհուրդը մանրակրկիտ քննարկեց Երամեանի նախագիծը, հանգամանօրէն ուսումնասիրեց կրթական ծրագրերը, վարժարանի 36 տարուայ պատմութիւնը եւ կազմեց համապատասխան տեղեկագրեր, որոնց հիման վրայ Քաղաքային ժողովն այն օրակարգ մտցրեց:

1914ի Յուլիսին պոլսահայ թերթերն արդէն ծանուցեցին, որ «կեդրոնական վարչութեան խառը ժողովի նախորդ օրուայ նիստին մէջ որոշած եւ արձանագրած է, որ Եւամեւֆուի կտակին տուկոսներէն տարեկան կարելոր հասոյթ մը յատկացուի Վանի Երամեան վարժարանին՝ կտակարարին անունով սաներ պահելու պայմանաւ»⁴⁸: Նոյն պայմաններով նմանատիպ օգնութիւն խոստացաւ նաեւ Սանասարեան խնամակալութեան ատենապետ Գաբրիէլ Նորատունկեանը «... Խնամակալութիւնը ի վիճակի է Սեբաստիա փոխադրուած նոր Սանասարեանէն զատ ցերեկօթիկ վարժարան մը եւս պահելու ի Կարին՝ տարեկան 1200 ոսկոյ պիտմէով եւ թէ նոյնքան մը եւս պիտի կրնայ յատկացնել մեր վարժարանին, որ իր արդիւնալից յարատեւութեամբ Կարնոյ գիշերօթիկ Սանասարեանի դեր կատարած է Վանայ մէջ»⁴⁹:

Այսպիսով, իր երկրորդ ուղեւորութեան առաքելութիւնը համարելով յաջողուած եւ աւարտուած, Հ. Երամեանը երանելիութեամբ արձանագրում է. «Թիֆլիզի Թամարեան կտակն եւս հաշուելով՝ հասոյթի եռեակ տարբեր աղբիւրներ ուրեմն գրեթէ ապահովուած կրնային համարուիլ, եւ ես կ'երագէի իբր երկու ամիսէն

⁴⁸ ԵՐԱՄԵԱՆ, Հ., անդ, էջ 277-278:

⁴⁹ Անդ:

նիւթական եւ բարոյական նոր ուժերով զինուած վերադառնալ վան՝ 1914-1915ի տարեշրջանը կազմակերպելու աներկեւան յոյսով: Նորատունկեան էֆենտին խնդրագիրս եւ դպրոցիս ծրագրին մէկ պատնէնը խնամակալութեան յետագայ նիստերուն պիտի ներկայացնէր՝ կանխաւ յաջողութեան ամէն հաւաստիք տալով ինձ: Բայց աւա՛ղ, իր անակնկալ մեկնումն Պալիսէն եւ ընդհանուր պատերազմի փոթորիկը վեր ի վայր պիտի շրջէին ամէն բան»⁵⁰:

Իր միսիան Կ. Պոլսում աւարտուած համարելով Երամեանը 1914ի Յունիսի վերջերին մեկնեց Զմիւռնիա: Զմիւռնիայի հայու թիւնն ու մտաւորականութիւնը յաւուր պատշաճի դիմաւորեցին եւ ընդունեցին նրան: Այդ օրերին թերթերը հանգամանօրէն լուսաբանեցին Հ. Երամեանի հասարակական ու մանկավարժական արգասաբեր գործունէութիւնը, ըստ ամենայնի մեկնաբանուեց նաեւ նրա առաքելութեան ազգանուէր նպատակը, առաջիկայ ծրագրերն ու անելիքները՝ կապուած վարժարանի յետագայ գործունէութեան հետ: Իր ուղերձում իզմիրցի վաստակաշատ ուսուցիչ Սարգիս Ամատեանը հնչեցրեց Երամեանին արժեւորող ու բնութագրող այն գաղափարը, որ նրանք, ովքեր իրենց հոգիներում պարփակում են փոքրոգութիւններ, անձնական գծուծ շահասիրութիւններ եւ այլ արատներ, ապա կարող են իրենց անձը դաստիարակել այս պատուական քաղաքացու, Մեծ Հայի կենդանի օրինակով, ով կարողացել է բազում փորձութիւններ յաղթահարելով՝ դառնալ ուղեցոյց եւ առաջնորդ բազմահազար հայ ուսուցիչների եւ կրթական գործիչների համար, քանի որ յանձին Երամեանի մեր առջեւ տեսնում ենք հրաշագործ մի մարդու, կատարեալ մի ուսուցչի «...վերջապէս մեմք ամէնքս որ քիչ շատ թերահաւատներ ենք եւ չենք հաւատար թէ այս դարուն մէջ հրաշք կրնայ գործուիլ, աղէկ ուսումնասիրեմք Համբարձում Երամեանի ոսկեղէնիկ հաւատքը եւ երկաթէ կորովը, որոնք հրաշալի արդիւնքներ արտադրած են: ... Եւ մինչ ամէնուրեք ազգային կրթական հաստատութիւններ կը տառապին հակառակութեանց ու անհամաձայնութեան մէջ, Երամեան իր տառամեայ շրջանով վարժարանը լիսէի բարձրացնելու համար պանդխտութեան ցուպը ձեռք առած է: Ահա մեծագոյն հրաշքը: Պատիւ եւ ողջոյն մեր վաստակաւորին»⁵¹:

50 Անդ:

51 Ի Արեւելեան մամուլ, Զմիւռնիա 1914, 6 Յուլիս, 289-290:

Այսուհանդերձ, Երամեանի իզմիրեան ուղեւորութիւնը սպասուած արդիւնքը չտուեց, քանի որ Օգոստոսի 1ին յայտարարուած պատերազմը իզմիրի կեանքը գլխիվայր չըջեց: Դադարեցին ամէն կարգի գործառնութիւնները, զինուորագրութիւն յայտարարուեց, ընդհանուր տագնապն ու խուճապը մոլեգնեց ամէնուր: Ահա թէ ինչ է պատմում Երամեանն իր անաւարտ ուղեւորութեան մասին. «...Այսպէսով հազիւ շուրջ 100 ոսկւոյ գումար մը կը հանգանակուի եւ ձեռնարկուած միջոցները կէս ֆարուս կը լիւիւն... եւ Սեպտեմբերի 12ին՝ ըստ հիմ տոմարի, Քալարդէն կը պրծիմք եւ Մակտա շոգեմաւով կը մեկնիմք դէպի Ադեֆսանդրիա...»⁵²:

Ալեքսանդրիան դարձաւ Հ. Երամեանի փրկութեան խարիսխը, որտեղ հայրենաբաղձ տարագիրը՝ Վանի յաւերժական կարօտը սրտին, 1929ին կնքեց իր մահկանացուն:

Սրանով աւարտուում է Հ. Երամեանի բռնուն ու ստեղծագործական եռանդով լեցուն կեանքի՝ նաեւ նրա հասարակական ու դպրոցավարական բազմաբեղուն գործունէութեան լաւագոյն շրջանը: Այդ ընթացքում նրա միակ լուսաւոր կէտն ու մխիթարութիւնը Պորտ Սաիդում եւ Ալեքսանդրիայի Պօղոսեան վարժարանում ծաւալած կարճատեւ տեսչական եւ ուսուցչական գործունէութիւնն էր:

Հ. Երամեանն իր գրական եւ հրապարակախօսական գործունէութիւնը հիմնականում ծաւալեց Ալեքսանդրիայում՝ 20ական թուականներին: Նրա առաջին յօդուածները տպագրուել են Գահիրէի Յուսաբերում՝ «Վեց խնձորներ» եւ «Ձայգ Գեղամներ» խորագրերով: Յօդուածները նուիրուած էին Տէր Թորգոմ եպիսկոպոս Գուշակեանի վաղամեռիկ եղբորդորդուն՝ Գեղամ Գուշակեանին: Նոյն թերթում տպագրուել է «Փառք ի քարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հանութիւն» խորագրով յօդուածը, որտեղ կենդանի եւ իրական գծերով տալիս է հայերի գլխին պատուհասուած տարհանութիւնների եւ կոտորածների դժոխային նկարագիրը, հարիւր հազարաւոր նահատակների եւ տարագրութեան արիւնոտ ու փշալի գողգոթաներից մազապուրծ եղած հայերի անունից խնդրում Աստծոյ արդար դատաստանը՝ յուսահատօրէն հարցնելով՝ «Ո՞ր է խաղաղութիւն եւ հաշտութիւն»: Նոյն թեմատիկայով Արեւում տպագրում է «Հայութեան խաչելութիւն», «Մեղումն» եւ այլ յօդուածներ: 1919ին

Արեւում նա տպագրում է «Օրենքի ի Սիռնե ելցեմ եւ Բան Տեառն յԵրուսաղէմէ» պատմավաւերագրական ակնարկը, որտեղ ներկայացւում է Անգլիայի նուաճողական քաղաքականութիւնը եւ ռազմավարչական այդ ակցիայի կրօնական եւ քաղաքական նկրտումները Պաղեստինի դէմ: Գրեթէ նոյն շրջանում Փարիզի Վերածնունդ թերթում տպագրում է «Ֆրանսահայ յարաբերութիւններ» յօդուածաշարը, որտեղ շարադրում է Պաղեստինի եւ Ասորիքի հայ համայնքի Ս. Յակոբ վանքի համառօտ պատմութիւնը⁵³:

Հ. Երամեանի գրական եւ մանկավարժական ստեղծագործութեան թագն ու պսակը «Յուշարձան Վան-Վասպուրականի» երկու հատորից կազմուած ծաւալուն աշխատութիւնն է. այն գրական ու մանկավարժական ուղղուածութիւնից բացի ունի նաեւ պատմավաւերագրական բարձր արժէք: Գրքի առաջին եւ երկրորդ հատորներում լայնօրէն քննարկոււմ են Արեւմտեան Հայաստանի, մասնաւորապէս Վան-Վասպուրականի սոցիալ-տնտեսական եւ ազգային քաղաքական կացութիւնը ԺԹ. դարի 80-ական թուականներից մինչեւ ցեղասպանութիւնը եւ դրանից յետոյ աշխարհով մէկ սփռուած հայութեան տարագրութեան իրական ու կենդանի նկարագրութիւնը:

Այդ տեսակէտից սոյն աշխատութիւնը կարեւոր փաստաթուղթ է ԺԹ. դարի վերջի եւ ի. դարի սկզբի արեւմտահայութեան տնտեսական ու քաղաքական կացութեան լուսաբանման համար. այն իբրեւ սկզբնաղբիւր կարող է օգտագործուել այդ շրջանով զբաղուող պատմաբանների, քաղաքագէտների, ազգագրագէտների, մանկավարժների եւ այլոց կողմից: Գիրքը հրատարակուել է ծայրագոյն վարդապետ Սիրունեանի նախաձեռնութեամբ: Այդ մասին Երամեանը երախտագիտութեան բարձր զգացումով գրում է. «Խորիմ շնորհակալութիւն մախաճեմարկ Գեր. Տ. Մամբրէ Հօր ինչպէս եւ գոյգ Յանձնաժողովներում Եփպատսի պատուական մերազմերից եւ վերջապէս Ամերիկայի արեւելեան մահանգներու համար մեր ներկայացուցիչ Վանցի ազնուասիրտ Տիար Նշան Նալպանտեանի, որ սիրով յանձն առին՝ մեր շիջեափառ Վան-Վասպուրականի յուշարձան կանգնել՝ տպագիր Վասպուրականցիներու սրտիմ եւ բոլոր հայրենասէր հայորդիներու ընտանեկան գրադարաններու մէջ»⁵⁴:

53 Ի Վերածնունդ, Փարիզ 1918, Սեպտեմբեր:

54 ԵՐԱՄԵԱՆ, Հ., ամդ, Բ., 540:

Գիրքն ընդգրկում է Արեւմտեան Հայաստանի վերջին հա-
րիւր տարուայ ազգային եւ քաղաքական կարեւոր դէպքերն ու
իրադարձութիւնները, նաեւ այդ շրջանում ապրած ու գործած
մանկավարժական, հասարակական, կրօնական եւ քաղաքական ա-
նուանի գործիչների կեանքն ու գործունէութիւնը:

Անդրադառնալով սոյն աշխատութեանն ընդհանրապէս եւ
Հ. Երամեանի հերոսական մաքառումներով լեցուն կեանքին մաս-
նաւորապէս, Երուսաղէմի պատրիարք Եղիշէ արքեպիսկոպոս
Դուրեանն իր նամակներից մէկում գրում է. «Իմաստութեան
մրագն ուղղեց դողդոջուն ֆայերդ իմացական՝ քարոյական եւ ըն-
տանեկան ասպարէզներու տարակուսական տարածութեան առջեւ,
ուր մեր գետնին վրայ դրած ռոքերովդ զգացուցիւր յախուռն ըն-
թերցողներու՝ թէ անհրաժեշտ էր ունենալ առաջնորդութեան ցուպ
մը այն մութ ճամբուն վրայ, որ աշխարհինն է, եւ ուր քանիներ կը
մոլորին կամ գլորին: Զգայթակղելով գիշերախառն գնացքիդ մէջ,
դէպի արշալոյսն արգդիմեցիր, մեր ապագայ յոյսերուն համար լոյ-
սեր շողացնելով, որոնք հարկ է որ չմարին...»⁵⁵:

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

Summary

HAMBARZUM YERAMYAN (1857-1929)

SHOGHIK VOSKANYAN

There is scanty information about the life and times of H. Yeramyán in pedagogical and journalistic literature. Garnik Stepanyan briefly mentions in biographical works and the Soviet Armenian Encyclopaedia that he was a figure of Western Armenian education, but there is incoherent information about the school founded by him. There are no specific studies of its pedagogical activity, and unfortunately no proper research has been carried out up to now of the 37 years of history of his school and his forty years of public and educational activity, all of which left a significant impact on the development of Armenian schools and culture.

Through his great efforts, memoirs of Van and the Vaspurakan region were written in two large volumes, which is an exceptional historical document and an original source for Western Armenian life, particularly about the economic and political situation of the Van *vilayet* at the turn of the 19th-20th centuries. If it weren't for this work, the remarkable history of the rich and dramatic life and impressive chapters of pedagogical and social activity of this prominent educational figure would perhaps be forgotten.

Besides as literature and in terms of an educational work, this memoir also has high historical and documentary value. The socio-economic and political situation of Western Armenia, especially the Van-Vaspurakan region, from the 1880s up to the genocide and first-hand descriptions of the deportation of Armenians are discussed in the book's first and second volumes.